164

28и
Б-79

Милующій птица

...щій воздаетъ возд...

...ющій удвоитс...

...птица уважаетъ Бог...

...ъ даетъ Богу капи...

№47.

иаго угождаетъ Бог

аилмъ даетъ. Богу ки

ш по его удачию. Пр

иаетъ. милующій, же

ующій нищаго въ зай

| | 832 |
|---|---|
| | Միքայելյան |

Պատմություն Մեհրդատի

| | | | |
|---|---|---|---|
| 19 | 10/II.69 | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՀԱՌԻՃՈՅ

## Ի ՇԻՐԱԿ

№28
(2)

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Անապատականին Հաւրեց

## ի Շիրակ

ԱՐԱՐ

[illegible]

միաբան ուխտիս Էջմիածնի



ի ՏՓԽԻՍ

Ի Տպարանի Յակոբայ Գրիգորեան Ենդոմնեանց

1856

Նուէր ողջոյն յորդառատ սիրոյ ազգա-
սիրութեան ախորժէքդ բարեբարել
Ազգիս՝ այսօրինակ զբաւոր պարգեւաց
մատուցմամբ 'ի ցոյց փութոյ Ձե-
րոց հասակակցաց, առ այն և ինձ
յուէտ ախորժելի Ազնուական
Ձեր Անձին զայս դոյզն նուէր հա-
նել պատրաստ. որպէս զի 'ի պանծանս
տոհմիդ առաքինութեան Ազնուական
Ձեր եմ Տէր, և Տէրունի Ազնուական
Ձեր ու հասարակ պաշտօնեայն.

Ազնուականութեան Ձերում

Աղօթարար ծառայ

Հայր Մատթէոս Մելիքեանց.

# ԿԱՆԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Պէտս Այրարատեան մերոյ նա-
հանգի վանաց եւ բարբանչեւր՝ ստու-
րագունի քան զայս այլ մեծաք են մա-
տենից, յանդարձակ առ ՚ի նոցին
հաստատութեանցն զաւլ զրուցա-
կարգութիւնս, ՚ի շինութեանցն ժա-
մանակ, յանկցութեանցն եւ նորո-
գութեան յանձն իւր ՚ի միջոց, եւ
մենաստանաց նոցին սկզբանց եւ ա-
ւերանաց՝ յորո՛վ աւուր եւ յո՛ր
ժամանակի. եւ զոր ՚ի հնոյ աշխար-
հէ զարդեան մնացորդս սրբութեան
Աստուածայնոյն տանց ՚ի յիշատակ
հայրենի բարեպաշտութեանց՝ ա-
նել տեղադրել.

Զայն և զոր այլ յիշատակաց նշխարս հնութեանց աշխարհի մերոյ Այրարատեան մասին՝ 'ի լոյս ընծայել կամիմ մեր Տեառն յաջողութեամբ, եթէ Նորա կամք իցեն։

Թողլով զորոնս 'ի բաց զընդհանուր ստորագրութիւն գաւառին Շիրակայ արարելոյն 'ի մէնջ, և որոյ 'ի նմին ողջոյն մենաստանաց 'ի կարգս քաներքին գաւառացն Այրարատայ միջնաշխարհին Հայաստանեայց ըստ կարեւոր հանգամանացն թերութեանց, աստանօր տամք 'ի լոյս պատմական տեղեկութեամբք զստորագրութիւն հռչակաւոր մենաստանին Հառիճայ 'ի Շիրակ, և որ 'ի նմա երկուց հրաշալի վանացն հանդերձ ներկայ տեղագրութեամբք ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Մենաստանին Հոռոմոսայ 'ի Շիրակ(*)։

Սկզբնաւորութիւն մենաստանեաց 'ի Շիրակ՝ եղեւ յաւուրս Բագրատունեաց թագաւորութեան առ Աբասաւ 'ի տասներորդ դարու, որպէս ասացեալ է մեր 'ի հաստատութեան կաթուղիկէ եկեղեցւոյն Էջմիածնի յամս Տեառն երր 930. ց936, յորում ժամանա-

(*) Մենաստան Հոռոմոսայ՝ [illegible] [illegible] Հայոց ՈԾ (1201). [illegible] 'ի [illegible] [illegible] Պետրոս [illegible]

կի Հայաստան եղեւ զխաղաղութիւն յերեսաց պատերազմական խռովութեանց ոստիկանացն Պարսից, 'ի հեռաւորութենէ արքային Տաճկաց. բայց որոց եւ աստանդականն ցրուեալքն Հայք դարձան 'ի հայրենիս եւ կրօնաւորք նոյին հալածեալք 'ի Ռոմանոս կայսերէ Յունաց գեղեալք 'ի Հայս, ուստի փախուցեալք էին՝ անցին 'ի Շիրակ, եւ էին 'ի նոյանէ, որք լքեալ յառաջագոյն զվանորայս, եւ աղարտեալ էին 'ի հինից՝ վերստին նորոգեցին. եւ էին, որք նորոգ շինեցին զմեծամեծ վանս յԱյրարատ,

---

Թեան 'ի հարաւոյ այնորիկ՝ շինեալն 'ի Սարգիս ծնաւ 'ի [illegible], որ- [illegible] ցուցեալ է [illegible]. [illegible] եւ Օտարերաոր [illegible], յորջորջեալ [illegible] «Կառուցեալն [illegible] Հայաստանի. . . եւ [illegible]». Այլ Հայաստանի [illegible]՝ [illegible]։

որոյ վասն վկայէ Կիրակոս պատմագիր. «Հաստատեցին, ասէ, վասն հալածեալ կրօնաւորացն ՚ի Ռոմանոս կայսերէ՝ զՀոռոմոսին կոչեցեալ վանք և զԴպրեվանք ՚ի Շիրակ գաւառի» որոյ և անունն իսկ յայտ առնէ ըզ հաստատութիւն իւր յեկեղցոյն ՚ի Հոռոմոց, զի Թո՛ղ զԿիրակոսդ պատմիչ, զոր մեկնէ Հոռոմոց վանք, այլք բացայայտ ևս ստուգաբանեն զանուն վանացդ՝ այսինքն Հոռոմ հասին. յորմէ ասացաւ Հոռոմոսին վանք.

՚Ի բանից աստի պատմագրաց յայտնի երևի, թէ և զՀաւուծոյ մենաստանն հաստատեցին ՚ի Շիրակ ՚ի պէտս կրօնաւորացն. և կամ թէ լքեալ յառաջագոյն զերեսաց պատերազմական խռովութեանց Պարսիկ ոստիկանաց, նորոգեցին ՚ի դարձի կրօնաւորացն, որում առաւել հաւանեալս եմ, զոր թէ և յայտնապէս ո՛չ յիշեն, այլ Աշխարհագիրք մեր վկայեն զամանէ ՚ի միասին ընդ վերոյգրելոյն վանորայից՝ լինել ՚ի Շի-

րակ, յորոց Սարգսեան «Շիրակ գա-
ւառն, ասէ, ուր կան սուրբ ուխտքն
Հոռոմոս և Մարմաշէն և Կամրջա-
ձոր, Դպրավանք և Հառիճոյ»։

Իսկ՝ որք հաստատեն ցուցանեն
զշինութիւն վանուց Հառիճոյ 'ի ժա-
մանակի զաւրավարաց կրօնաւորացն, և
նախքան զնոսին են լինել բազմօք
յառաջ քան զաւուրս Աբասայ, յո-
րում՝ շինութիւնք և նորոգութիւն
մենաստանաց 'ի Շիրակ էն

Նախ՝ վաղեմի արձանագիրք ինչ
նոյն վանուց Հառիճոյ, որոց թուա-
կանք անցանեն և անդր քան զդարն
տասներորդ, այն է, քան զաւուրս
Աբասայ և քան զհաստատութիւն մե-
նաստանի 'ի սկեա հալածելոյն կրօ-
նաւորաց. զի թուական խաչ վիմին
եղելոյ 'ի հին դրան զմնատանն մերձա-
նից վանացն յարևելից նորա 'ի բար-
ձրաւանդակին, 'ի մատրանն որ յա-
նուն սրբոյ Յարութեան Քրիստոսի
'ի վերայ ձգնաւորի ուրումն, որպէս 'ի
ներքոյ, գրեալ 'ի թուականին Հա-

յոց՝ ԻԱ. յամի Տեառն 572, ի նկա-
ղեալ ցուցանէ, թէ ՚ի միջերայ դա-
րու անտի և յառաջներոյդ՝ եղեալ
է մնացուածն Ճառից. և ՚ի դար-
ձի կրօնաւորացն, այն ինչ չինեցան
մնացուածք ՚ի Շիրակ, ու դոլով
՚ի ժամանակին այլայլեալ ՚ի Հինից՝
նորոգեցաւ յամաց ՚ի կրօնաւորացն
՚ի տասներորդ դարու. զորոյ յիշ-
եցէք Հայոց. պատմ. Չամչեան.

Ներկերդ՝ զի կառուցանեալ ձեռին
Սարգսի զոյր Գրիգոր Ճառից,
յորում հանդերձ սկզբնաւորութեան մե-
նաստանին և առաջնորդութեան այնո-
րիկ, լեալ է առաջնորդ վանացն՝ Ճա-
մբազալ անուն. զի յարձանագրին չի-
նութեան յիշատակէ ձեռն. «Ես Հայր
Ճամբազադայ առաջնորդեալ, որ ՚ի Սար-
գսի և ՚ի Իադոսի տանէն Ժ առ-
աջնորդեն զՆերկերտ յիմ ա-
նուն». որով յայտ է թէ, և նախ
քան զկառուցումն այսոյն Գրիգորի՝
էին մնացուածն և առաջնորդք վա-
նացն. այլ թէ ո՞վ լինի եկեղեցի և

ո՞ր անուամբ յորջորջեալ՝ անծանօթ , դուցէ մատուռն սուրբ Յարութեան.

Քանզի՝ և սակս այլոյն վանաց յիշելոյ ընդ Հառիճոյ՝ վկայի լեալ յառաջագոյն քան զգալուստ կրօնաւորացն , որպէս դնէ և հին Հայաստան ըստ բանից Պատմագրաց • «չինուէին , ասէ , զոր պատմեն պատմաբանք, այլում է համարել նորոգումն». Քանզի՝ բազմօք յառաջ քան զՀալածեալ կրօնաւորացն, որք էին 'ի տասներորդ դարու՝ առաջնորդ էր Պողրավանից Սարգսեղ ձոն , որ է յեօթներորդ դարու • զի Սարգան պատմագիր վկայէ , «Այս արար, ասէ, 'ի ձեռն սորայն Սարգսի մականուամբ ձոն կոչեցելոյ , որ էր առաջնորդ սուրբ ուխտին որ Պողրավանքն կոչի 'ի գաւառին Նուայ. ԷրԷ. 430».

Արդ՝ եկեղեցին Հառիճոյ անուանեալ սուրբ Գրիգոր , կառուցեալ է Սարգիս ձոն • և սա որպէս երևի յարձանագրութեանց , լեալ է առաջնորդ Հոռոմոսին վանաց 'ի տասներորդ

դարու. բառ որում յամին 979. կառուցեալ է նա զեկալմիր վանս այժմեան Պղբեհլիայ կոչեցեալ գեղջն բառ նորին արձանագրութեան յեզր Սխուրեան գետոյ 'ի վերքան զՀոռոմոսին. և բառ այսմ դիպուք թէ՝ նախքան զայն կառուցեալ իցէ և զսուրբ Գրիգոր Հառիճոյ. այն զի փոխանակեալ է նա յամի Տեառն 985. (ՆԼԴ). այս բառ այսմ ճշդիւ դասանեմք զշինութիւն մենաստանին Հառիճոյ սուրբ Գրիգորի 'ի սոյն Սարգսէ 'ի տասներորդ դարու առ Խսրով առաջնորդութ 'ի միջոցս տասն ամաց մինչև ցման հը. այսինքն յ970 ամէ ց979 ամ Տեառն. (ՆԻԸ). յորում ժամանակի հիմնարկեալ զեկալմիր վանսն, ընկալեալ է զփոխանակ .

Նա թէ՝ մի և նոյն Սարգիս իցէ կոչեցեալ ձեն, որ զՀառիճոյ վանս շինեալ և առաջնորդեալ Հոռոմոսին. զայն հաստատեմք յարձանագրութեանց նոյն վանաց Հառիճոյ՝ յեղելոյն առատաբուառ նորա յորին

արեւելեան հարաւոյ ․ զի յարձանագիր նորոգումն նորա 'ի Գրիգորոյ առաջին Առաջնորդէ ուխտիս՝ ասի ․ «Ես Գրիգոր առաջին առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճոյի շինեցի զսեղն ամնողեան իմոյ 'ի հարիւրամեայ կործանմանէն» ։

Այսմ արձանագրի ոչ գոյ թուական ․ այլ ապացոյց ստուգութեան սորա, թէ յորո՞ւմ ժամանակի լեալ, գոյ յարձանագիր տապանի սոյն առաջնորդիս, որ կայ 'ի միջատակեալ հին գերեզմանատան յարեւելից վանացս 'ի բարձրաւանդակին ըստ այսմ ․ «Այս է հանգիստ երջանիկ ծերունի սուրբ հայր Գրիգորի առաջնորդի երկրորդ շինութեան սուրբ ուխտիս» և այլն ․ 'ի թւ․ հայոց ՈԴ․

Արդ՝ որպէս տեսանի յարձանագրէս, Գրիգոր վարդապետ առաջին առաջնորդ լեալ երկրորդ շինութեան ուխտին Հառիճոյ 'ի հարիւրամեայ կործանմանէն, վախճանեալ է 'ի թուականին հայոց ՈԼԴ․ (1185)։

Ռամկով ասել 'ի բաց զամս տասն, զոր եղև թէ անցուցեալ էր նախքան զկանխման իւր նոյն ինքն Գրիգոր յետ շինութեանն . վասն զի եթէ լեալ էր նորա առաջնոյն յերկրորդ շինութեան ամբ ուխտին, որպէս և կալեալ էր առանց երկբայութեան զառաջնորդութիւն պամն ինչ մինչ զկանխման իւր 'ի նոյն թիւ ՍՂ . յորմէ 'ի բաց բարձեալ և զամն հարիւր յորս կործանեալն էր, շինութիւն ամբք Գրիգորի եկեղեցւոյն Հռով-ձեյ եղանէ ըստ այն մետասաներորդ . այն է, ցթուականն Հայոց ՌՀԵ (1075) այսինքն հարիւր քսան և հինգ ամօք յառաջ քան զշինութիւն կաթուղիկէ Ս. Ծանծնեին որ 'ի Օ. աքարեայ։

Այլ եթէ ասացուք 'ի մէջ և զամս հարիւր նախքան զկործանումն, յորս անշուշտ եղեալ էր ամբք Գրիգոր 'ի շինուէ, յայնժամ ուղղակէս զամսն մի զշինութիւն նորա 'ի Սարգսէ ձեռնէ 'ի թուին Հայոց ՋՀԵ (975) . զի 'ի նմին ժամանակի այն Սարգիս ձեռն

առաջնորդ Խոռոմոսին վանաց՝ կառու-
ցեալ է զԽառնիձոյ սուրբ Գէորգ որ եկե-
ղեցին. յորում ժամանակի Հիմնար-
կեալ նոյնպէս սուրբ Գէորգ որ անուանի
զեկեղեցի կոփածոյ քարամբք և 'ի
Գ. զւ. քրիստոսի գեղջն 'ի Շիրակ, որ-
պէս տեսցուք, առ Ախուրեան գետով
մերձ 'ի Խոռոմոսին վանս 'ի Թուա-
կանի Հայոց ՆԻԹ. (980). վախ-
ճանեալ է անդէն չև ևս աւարտեալ
զայն, զորոյ զշինութիւն յանգա-
ւորեալ է Սարգիս վարդապետ աշա-
կերտ նորա յամի ՆԼԴ. (985).
ըստ որոյ և խոկայէս համարի շինու-
թեան սուրբ Գէորգ որ եկեղեցւոյն Խա-
ռնձոյ 'ի Սարգսէ Առաջնորդէ Խոռո-
մոսին վանաց յամին իբրև ՆԻԴ. (975)
յետ որոյ հիմնարկեալ զմիւս համանուն
եկեղեցին 'ի յիշատակեալն գեղջ. ըն-
կալեալ է վախճան յամի ՆԼԴ.
(985) որպէս տեսանի յարձանագրին.

Խաչիւ բանեալ ժամանակ կործա-
նման սուրբ Գրիգորի պալատ է համա-
րեալ զմիջոյն, յորում բարձեալ թա-

դաւորութեան Բագրատունեաց յամի 1079. անկաւ Այրարատ նահանգ ողջոյն հանդերձ Շիրակաւ 'ի ձեռս Թշնամեաց, որք փոփոխակի տիրեցին այնմ մինչև ցամ Տեառն 1184. (ՈԼԳ.) յորում ժամանակի Զաքարիա Ամիր սպասալար և եղբայր նորա Իւանէ Աթաբէկ ստացեալ զսպարապետութիւն 'ի Թամար Թագուհւոյն Վրաց, բազում գործս քաջութեան ցուցին ընդ Պարսկօք, զորմէ տես. ([illegible] Հատոր. Չամչ. պատմ. էջ 149).

Զաւերանաց մնացորդաց դաւաւին Շիրակայ գրի և յարձանագիրս նորոգութեան վանաց Մարմաշինոյ, զորմէ աւանդին. զի 'ի ժամանակին յայնմիկ ո՛չ սակաւ աւերեալ էին անօրէնք զվանորայս և զկաթուղիկէս նոյին բերդանման ամրացուցեալ, զինեալ յամենայն դրից՝ 'ի խաւարի և 'ի սպառութեան Թողուլ.

Յայսմիկ ամենայնի վերոգրեալ տեղեկութեանց երևի, թէ մենաստան Հառիճոյ զամս երկու հարիւր, այն է

յամին Տեառն 970. (ՆԺԹ.). և 979. (ՆԻԸ). մինչև ցամն 1079. (ՇԻԸ). լեալ է 'ի հաստատութենէն յետ այնորիկ. յորժամ այս հարիւր ը ամաց անցեալ, զոր միաբանութիւն այնորիկ համարի կործանեալ. բայց այժմ՝ նորոգութիւն սուրբ Գրիգորի լինի յամի Տեառն 1179. (ՈԻԸ). քանզի՝ այն սա Գրիգոր վարդապետ անուանեալ 'ի նոյն վանս Հաղարծնոյ և 'ի վարդապետութեանն ամենայն լեալ այնմ՝, նորոգեաց զայն «'Ի հուշէ-րամնոյ ջոր-ջամանէն» և կարգեաց անդ կրօնաւորս արս բարեսէրս և խրատեալս օրինօք Աստուծոյ. որպէս և ոչ զանց առնէ նա յիշել յարձանագիր նորոգութեանն արտաքուստ յարևելեան որմն սուրբ Գրիգորի 'ի Հաղբաւոյ, որ և յետ մեր ամաց փոխանեալ անդէն, մարմին նորա ամփոփի 'ի հին գերեզմանատան վանացն, որպէս 'ի մերն տեսյա, 'ի թուականի Հայոց ՈԼԴ. (1185).

Աղօթաւորականն ու խոր հառաչանաւ սաստին յաւուրց Գրիգորի և յայսպս, սատուցեմք 'ի միւսոյ արձանագրու-թեանն եղելոյ 'ի ներքոյ վիմոյն՝ 'ի նոյն որմն արևելեան հարաւոյ. զի յետ Գրիգորի յաջորդեալ զաթո-ռոյն ու թիւն Հայր Պետրոս, ասելով է 'ի նմին գոյն արձան յիշատակի յետ եօթն ամաց վախճանելոյն Գրիգորի՝ յանուն, «կամաւն Աստուծոյ մեք Ջաւախեցիս Հայր Պետրոս և այլ եղբարքս համաձայնեցաք 'ի տասնի տա-պանակին՝ խոլ 'ի մասանն պատա-րագել զ՝Արիստոս յանուն Գրի-գորոյ վախճանակ արդեանց իւրոյ. 'ի թուին ՈԽԱ. (1192).»

Այս Պետրոս բաց արձանագրու-թեանցն յաւաջանելոյ՝ կայեալ է յա-ռաջնորդութեան վանացն Ջաւախեց զամս երեսուն և հինգ, որպէս յար-ձանագրիս և 'ի կարգս առաջնորդաց.

Յաւուրս սորա պայծառացեալ գեր-կեր Աղբաւեան յորում և գտա-սւան Շիրակ, Օսքանէ Ամր

սպասաւոր և եղբայր նորա Իւանէ Աթաբէկ , որդիք մեծի իշխանին Սարգսի · զորս ասէն պատերազմելով 'ի ձեռաց Պարսից , որպէս ասացաւ 'ի վերն · յորում ժամանակի երկրին սորա եղբարք շինէին յԱյրարատեան նահանգի զգաւառն փառորացն աւերեալս 'ի վաղ ժամանակաց յԻսմայէլեան հինից , և զգաւառսն ես նորոգէին , ընդ որոց և Շիրակ գաւառ Այրարատոյ` ազատեցաւ 'ի նոցանց · զայն եւ հաւաստաւոր մեկնասան Ճառեաց , յորում ասէր Գրիգոր եկեղեցին ամօք ինչ յառաջ նորոգեալ յաւերանաց 'ի Գրիգոր առաջնորդէ , զորմէ գրեցաք , «գանձագին տէր» նորին սպասաւոր «յետ ընական հայրենատերացն» յանուն Թամարայ Թագուհւոյն Վրաց , յառաջնորդութեան Հայր Պետրոս վարդապետի · այն է , գնեաց զմենաստանն հանդերձ շրջակայ սեպհական նորին սահմանօք` յառաջին կալուածատեարց նորին , որոց ցոյն վերը լեալ

էր հայրենատուր տեղի . և յաւել եա միւսն յայն կոչուած՝ գիւր գիւղին կՍոկորեա (*). որ մերձ լեալ է Վանայ . նա և զտեղին ինչ նորոգ եա 'ի կոչուած նորա , զծովս , զձորս , զգետս և զայլ գիւղօրէղիս , որք միջամտին յորձանացն . ուր և շինեալ զամրոց և զկաթուղիկէ Ս. Ծածին եկեղեցին հրաշագործ յօրինուածովք 'ի կոփածոյ քարանց , զարդարեալ զայն բազմամ՝թերս աղասուք որութեան . և զառաջին սահմանս վանացն հաստատելի , ուր , որք գուցէ 'ի ժամանակին յափշտակեալ յայլոց . որ և յաղագս այլի այսօրին միջամտեալ և շինութեան եկեղեցւոյն Ս. Ծածնի՝ գրեալ է արձանագիր ըն-

(*) Աշխ. Պուրնէ Գեղ. ուր Սուրբն Հայրապետ անուամբ Պարոյն իշխեն [illegible] , որք ունին [illegible] և [illegible] 'ի ժամանակաւ , [illegible] 'ի ժամանակէն և [illegible] Պուրնէ Գեղ իշխեն Ս. Ոսկերչին ։

դարձակ՝ արտաքուստ այնորիկ յորմէ հիւսիսոյ, որպէս 'ի կողմս արձանագրայն. յորմէ որպէս երևի, շինութիւն եկեղեցւոյն աւարտեալ է 'ի թուականի Հայոց ՈԾ. (1201).

Պատկերք երկուց եղբարց արձանագրեալ 'ի վերայ սեանց վիմի միոյ մեծի, հաստատեալ է 'ի շարուածս որմոյն յարևելեան ձեղնատու եկեղեցւոյն 'ի բարձրութեան անդ, զորս ընդարձակ գրեալ եմք 'ի սորագրութեան կաթուղիկէ Աստուածածնի եկեղեցւոյս.

Յաւուրս Օտարաց և նախ քան զնոսա, որոց զինչս յիշատակեալ են մենաստանին, արձանագրեալ են զայն ամենայն յորմանս եկեղեցւոյն հնոց և նորոյն. զորս օրինակեալ կարգեցաք 'ի ներքոյ բառ կարգի ամացն, յորս արձանագրեցաք.

Յայսմակի գործ անմահ յիշատակաց հազուագիւտ արքունութեանց նոյնին խրախուսեալ և Աստուածաշէր Պատրոնն

Սահրամ Հիջուպ(*) ըստ նախնի սովո-րութեան ազգիս Հայաստանեայց, կառոյց կէս կաթուղիկէ Լուսաւորչին զհրաշակառոյց ժամատունն, զորս-մնեան դուռն նորա ընդ մէջ առնլով նովին լայնութեամբ՝ ՚ի յիշատակ հոգւոյ իւրոյ և զաւակացն և ամուսնոյն իւրոյ Թամարայ, առ առաջնորդութեամբ տէր Համազասպայ. որոյ շինութեանն արձանագիր կայ յորմն արևելեան ՚ի մէջ նոյն ժամատանն.

---

(*) Այս Սահրամ Հիջուպ՝ [illegible] ՚ի Սահրամայ Պահլաւունեաց [illegible] [illegible] [illegible] [illegible] Տեառն 1047. (ՆՂԶ). [illegible] ՚ի Սանահին, որպէս գրէ Հ. Չամչեան. յԳ հատոր. եր. 938.

Բայց Աստուած Հիջում երեր 'ի սրբոյն փառաց զծուր յարեալեալ հորակէ մնացորդին. (*) զոր մեր քուր անուանէ յարձանագրին, 'ի մեր- ձակից հորակէն, որ 'ի լանջս լերին յապառաժուտ վիմաց.

Ուղղանդակ ժամանակաց, յորս 'ի հաստատութեան եկաց մնացորդն յերկրորդ նորոգութենէն Գրիգոր

---

(*) Աշխարհագիր Քաղաքեբեան 'ի Հե- ջուաց Աստուածոյ յեղանակ ժամանակէ յետ աւերման քաղաքին երեւելւոյ Գուշեւ- այր և խուղքէնական ծանուցանէ, մինչ- 'ի Ներքոյ ատուր մի 'ի 1851 ամի, գերաքին եհան զծանուցանէն և եբեր զքաւր ադեբերն 'ի քաղաք քաղեքադարձն խոսոգատար Աշխարհեան Սուրադէնաց, քանիէս Աշխարհադարձութեան նորոգ թա- խաւս և քաղեգադարձան աստուածաբանու- թեանս քաղաքին. և 'ի յեղանակ հանգաց խորոց, զոր քաղենդարանէ գործոց ատա- ջիանէր արանց, որոց յեղանակ անման- հարեալք էն յարեանագիրս քաղաքին.

մարդ առաւել առաջնոյ առաջնորդի չի-
նութեանն 'ի հայրապետաց կործանե-
մանեկն, ժողովին յարձանագրաց՝ ամբ
բող ամենին փոխման. այն է, 'ի
ՈԻԶ. (1177). ամէ (զի փոխման
Գրիգորի է 'ի ՈԼԳ). մինչև
ՈՁԴ. (1235). թիւ. զամն տասն
և ոտնոյով բող. մէջ նախ քան բզ
փոխման Գրիգորի. բայց որում չէ՛ք
թուական նորոգութեանն 'ի նմանէ.

Նոյն յետ այնորիկ չգտանեմք այ-
լուստ ժամանակ հաստատութեան վա-
նայդ 'ի ժամանակակից պատմագրաց
և զի յետ յիշեալ թուականի չէ՛ք
այլ ևս արձան յիշատակի յորմանս
նորա 'ի յաջորդ ամեն. ուստի և որ-
չափ զանուանս առաջնորդաց դորա
յարձանագրէն առնք, բայց 'ի Սարգսե-
անէ և 'ի Համազասպայ առ նորին ժա-
մանակաց, որոց շարունակութիւն
բող հասեալ է 'ի կործանման մենաս-
տանին և նախ քան զայն ևս. բայց
որում արձանագիրք 'ի նոյնոյ՝ չու-
նին թուականս, նոքա անծանօթեան

կոչեալ են գլխահայրութեան վանացն յընթացս վաթսուն ամաց յետ նորոգութեանն 'ի Գրիգորէ առաջնորդէ ․

Նոյն թէ ցո՞րչափ ժամանակս կալեալ իցեն առաջնորդութիւն Խաւձոյ յետ շինութեան սորայն Գրիգորի 'ի ձեռնէն, առաջնորդք մինչև ցկործանումն նորա հարիւր ամօք յառաջ քան զնորոգումն Գրիգորի ․ և թէ ո՞րպիսիք ամենք լեալք, չիք ուրեք յիշատակութիւն ․ մանաւանդ յարձանագիր շինութեանն 'ի ձեռնէն Սարգսէ ․ որ որպէս ասացաք , չունի զթուականն ․

Բայց հարկաւ յետ Խամզապայ որ յաւուրս ձեռնին 'ի շինութեան սորա Գրիգորի՝ լեալ են առաջնորդք Խաւձոյ շարունակ մինչև ցառաջին կործանումն կամ՝ յաւեր նորա ․ զի որպէս հաստատեցաք 'ի վեր անդր, և թէ 'ի միջերորդ դարու և ցշինութիւն սորայն Գրիգորի լեալ են աստ միայնակեացք, որոց 'ի հարկէ և վանահայր, այս և յետ շինութեանն, յառում առաջնորդաց յիշատակութիւն,

և ցաւերն՝ շարունակութիւն վանահայրութեան.

Նաև անկարելի՛ թուի կարգի պատմութեանն, եթէ յետ յիշատակեալ թուականին ՈՁԴ. (1235). չէ՛ լեալ մնացածն ’ի հաստատութեան մինչ ցաւուրս Շահ Աբբասայ առաջնոյն պարսից յամի Տեառն 1604. (ՌԾԳ). յորում ժամանակի ’ի պաշարմանն քաղաքին Երևանայ, հրամայեաց նա զօրավարաց իւրոց աւերել զկալուածս ինչ Հայաստանի աշխարհին եղեալս ’ի ձեռին Օսմանեանց. որք էին՝ Կարսէն, Խնուս. և որպէս գրէ Առաքել պատմագիրն, ’ի Շիրակայ մինչև ցԿոփ, ’ի Նախիջևանայ մինչև ’ի Կուր գետ, ’ի Վաղարշակերտոյ մինչև ցԱրագ էն. յորմէ զարհուրեալ բնակչաց երկրին, էր, որ իջին յանմատչելի անդրս խորաձորոց. և էր, որ ելին ’ի բարձրաւանդակս լերանց, ընդ որս և կրօնաւորք վանորէից. «Նա ’ի ցրուել նոցա այսպէս, առէ Զամչեանն հայր,

գրէ թէ մին 'ի տասանց հազիւ մնայ 'ի քաղաքս և յաւանս աշխարհին Այրարատոյ և Սիւնեաց և այլ տե-ղեաց. յգ. հատոր. էջ. 546.

Նաև չէ՛ տարակուսական մնալ Հա-ռիճոյ վանայն 'ի հաստատութեան մինչև 'ի ժամանակս այսոցիկ հալա-ծանաց և գերութեան առ 'ի Շահ Ապպազայ. զի գաւառք Արարա-տեան նահանգի մերձաւորք սահմա-նայն պարսից, այն է, Արագածոտն, Կոտայք և այլք, ևս և նոքին վանո-րայք ցայն վայր էին հաստատունք 'ի շինութեան, որպէս Յովհաննա-վանք, Հաւուց թառ և Այրիվանք, յորս առաւել բորբոքէր պարսկային բռնութիւնն, քան 'ի հեռաւոր գա-ւառսնորքին. ուստի և Շիրակ և նորին Ածաշէն մենաստանք ևս առաւել գերծ լինէին 'ի պարսկային յափշտա-կութեանց մինչև 'ի ժամանակս Շահ Ապպազայ, և եթէ յետ այնորիկ և մենաստանն Հառիճոյ ընդ գաւա-ռին խրամ անկաւ 'ի ներքոյ աւե-

րմնոյ, յայտնի է այն 'ի վերայ նշանակեաց անդէն ըստ ականատեսային պատմութեանց.

«Քանզի և նախնի աւանդական բընակիչք Հաւրիզոյ ծերունիք ամենք այժմ 'ի Պարսից տացեալ գեղջ, այն է, 'ի հին Ս՝ոկորիս, պատմեն, թէ 'ի ժամանակս իւրեանց, այսինքն, յաւուրս Հերակլ արքայի վրաց, չե՛ն տեսեալ զհաստատ միաբանութիւն 'ի Հաւրիզոյ վանս, իբր 'ի շինութեան, բայց ըստ պատահման եկեալ են վարդապետք և մնացեալ զամ մի աւելի կամ պակաս, գնացեալ են վերստին, թողլով անդրանիկ զկանոն.

Իսկ 'ի թագաւորութեան Հերակլէ, ընդ որոյ տէրութեամբ էր ապաւինեալ մասն Շիրակայ յայսկոյս Մխարբեան գետոյ, յաւուրս անտի գրէ թէ Սպասալարին Օտարեայ, Պահլևան անուն ումն տղեան Պարսիկ յազգաց յաղթութեան իւրք 'ի վերայ թշնամեացն Հերակլի, առնու 'ի նմանէ պարգևել մասամբ զերկրին Շիրակ 'ի

ներպահական ժառանգութիւն իւր. Մա-
անեղի բնակութեան երկրեան ան՛նէ
պաշտման Ն՛որինկ գիւղ, որոյ ՚ի տե-
սանելի զգաճարարեալ զեկեղեցին
Հաւատոյ, յաւէտ հանձեալ ընդ այնս,
չինէ համարակ չինուածոյն պաշտա-
րանս ՚ի վերայ եկեղեցեացն վանաց
և Ն՛որինկց վասն պահպանութեան
յերեսաց թշնամեաց. որպէս զի ՚ի
յառնել հոգւոյ, անդր ժողովեալ զամ՛
ողխս և զհացատակս իւր, անխնայ-
ցէ երբե յափշտակելի.

Իսկ յետ առման Երեւանայ ՚ի պար-
սից, որում ՚ի ժամանակին իշխէր
Մ՝ահմետ խան, երբե այդ ընդ՝նմ
գանձութենէ աւելորդն և զամբոցն
և զաշխատակոցն ՚ի վանս Հաւատոյ
՚ի Ռ՝ուսակ երբե զանդերս ապստամբ-
ութեան թշնամեաց, փոփոխակի
աւերալ զոր ՚ի ձեռս Պ՝եւպլակոց
անձն ոգուոյն զօրազօրի իւրոյ, ա-
ռալէ զնա անդր աւերեալ զամբոցն
և զեկեղեցին վանացն Հաւատոյ յա-
րամ՝աշխատակերն. Իսկ՝որպէս եկեալ

և դարմանաղօղ լեալ, յարձակի 'ի
դէպ ժամու 'ի վերայ նոցա, և զանեղէ
կալեալ 'ի ծոցս աշտարակացն, հրա-
մայէ առ ժամայն հիմնայատակ կոր-
ծանել նախ զեկեղեցին սուրբ Յարու-
թեան (զորմէ ասոն) շինեալ 'ի հա-
րաւոյն եզր հանգստարանին հնոյ,
որ 'ի բարձրաւանդակին, զորոյ ըդ
վայելուչ կերպարանս տեսանողք՝
յարտասուս յորդէին. և ապա ար-
ձակէ անօրէն զօրս 'ի վերայ ամենայն
կործանել մինչ ցհունն արևելեան.
ընդ որ 'ի խոր խոցեալ Պ աշխարհին
և ո՛չ կարացեալ ժուժել մինչև
յայժ ընդ անդթութիւն զօրագլխին,
որով 'ի մէջ եղեալ էր չթողուլ
քար 'ի քարի վերայ սրբութեան տե-
ղւոյն, մեծաւ պաղատանօք անկանի
յոտս նորա խնդրել զէթ յեկեղեցին.
յորս չէ՛ք, ասէ, յաւալի ամբութիւն
իբրև ապաստանարան թշնամեաց. որ
և շնորհէ նմա զեկեղեցին.

Նա յետ սակաւ ինչ անցելոյ՝
տէր Սարգիս ոմն երէց չերակայլ 'ի

փաղձանիլ անուանց խելոյ, հրամա-
րիլ կամելով յաշխարհէ, գայ, ընա-
կի ազգայնովք խելովք 'ի վանս Հռո-
ռինձոյ, ունել զայն յիւր տուն բնակու-
թեան. որ և առնու յիշխանութենէ
ժամանակին զինդար փոխդաչետու-
թեան: Որա, ասեն, շինեալ զպարա-
շէն խաչկալ անխոյելուց 'ի սեղանի
Ծառնի եկեղեցւոյն, որ այժմ չի՛ք
ամենևին 'ի միջի. և խորհուրդ չար
'ի մտի եդեալ ունելովնորա, գոլով
այր անուանի ուստի և անխիղճ և
փառասէր, այլապա ձեռօք կարգա-
ռեալ և եղծեալ զի՛նչ ինչ արձա-
նագիրս յորինց Հաձիրային Աստու-
ծոյ, և զանեղծին յղկեալ 'ի նորոյ, ա-
նօրէն մօք կամէր զյիշատակս նախ-
նեացն և զվաստակս նոցին, զտուրս
և զնուէրս փոխել դարձուցանել յիւր
անուն. զի իւր վասն անուն հա-
մանուն Սարգսի վասնին և գործք
անօրէնք յիշեսցին յազգս ազգաց յա-
պայս ժամանակաց, և քարոզեսցի
երախտաւորութիւն 'ի վերայ Ծաշէն

մինայն՚որդ. այլ վասն զի՝ Ա՟Ծ է ն-
կնդեցեալ իւրոյ փառային վեհ ժխմլեր,
և զփառս իւր այլում ո՛չ տայ, և
ամա յայս մեր չարութեան ո՛չ յա-
ջողեաց. զի յետ ջանալոյ՚նորա անհե՛տ
առնել զյիշատակարանս տաճարին
որ վասն արձանի յիշատակի, յաղագս
այլ իմն անարժան գործոյ իւրոյ
կոչեալ զնոյն լինելն զՄարգիս շուշանակ՝
հոգևոր իշխանութիւն Էջմիածնի,
արգելու զնա անդր ո՛չ ևս գա-
նալ ՚ի Թաւրէժ. և այս՝ յԱստուա-
ծային տեսչութենէ.

Եւ յայնմ օրէ և յապա այս մենա-
տան մնոյ յամայութեան մինչև ցտի-
րապետութիւն կողմանցս ՚ի Ռուսաց
յամի 1827. յորում ժամանակի և
Թաւրէժ կալաւ զհաստատութիւն,
յորժամ զաղթական Հայք Կարնոյ և
Կարուց և նորին սահմանաց անցին ՚ի
ներութենէ Օսմանեանց՝ ՚ի սահման
Ռուսաց և լցին բնակութիւք զաւերակս
գիւղից, քաղաքաց և վանաց. որոց
մեծ մասն բնակեցաւ՚ի Շիրակ յայս

կայս Ս. Խաչ բերանն գետոյ, որ սահմա-
նագլուխն է Ռուսաց և Օսմանցւոց,
յամի 1830, Աւետիքեան եպիսկո-
պոս Խաչատուր ամենայն կայսերականի առ ազատորդ
Կարսայ, բարեձեւեալ զմիաբանութիւն
Հայաստանեայց վանաց նոր ազգաբնին,
բերել 'ի վանս Հայաստանեայց, և որոյ ծա-
ռայութեան ցանկալի եկեղեցւոյն Ս. Ա-
ստուածածնայ սրբոյ, քան մեծ վայելչութեամբ
զարդարեալ լուսով չքնաղութեամբ,
առաջնորդ լինել վանացն և գաղթելոյն
ժողովրդեանս, իբրև իրաւամբ սեպհա-
կան հօրն, որպէս և Կայսր Ռուսաց
շնորհէ նմա 'ի մշտնջենաւոր վիճա-
կաւորութիւն յաղագս սպասաւորութեան լինելոյ
նորանորոյն գաղթելոյ 'ի Ռուսաստան

'Ի սոյն ժամանակի ծերունի Պա-
պոս վարդապետ Յ. Աղեքսանեան կայսերա-
ցի առաքելոյն Յովակիմ, ընդ գաղ-
թելոյն ժողովրդեան բարեձեւոյ զկայս
վանաց Հայաստանեայց Ս. Ծաղկի,
և զհրաշագործ պատկեր եօթն վերաց
Ս. Ծաղկի, անցանէ 'ի սահմանս Ռուսա-
սաց 'ի Տայս · առ վախճանն աւթեանց

չդառնալ զանգի ընակութեան, դառ-նայ 'ի Շիրակ գաւառ յամի 1832. 'ի վանս Սաղմոսավանից յամսեանս 'ի ժա-մանակին, յանկարծակի մեռեալ անդ էր.

Նաև զայս լուեալ Յովհաննէս կա-թողիկոս կարբեցի, և ծանրութիւն համարեալ զաղթականն ժողովրդոյն զերկուս մենաստանս 'ի միում վի-ճակի մնալ 'ի շինութեան, առանց թեմական ժողովրդոց, փոխադրէ զՊօղոս վարդապետ հանդերձ պաշտ-կերաւն 'ի Ջառիձոյ վանս. յորում և միաբանեալ նորամիոյ ցեղն անուն Ստեփաննոս եպիսկոպոսի յայլ վիճակ առաջնորդութեան բարձրագոյն հրա-մանաւ, ինքն կարգի վանահայր այնմ մինչև ցայսօր ժամանակի, որպէս երևայ է մեր 'ի կարգս առաջնոր-դաց, և 'ի նախ հրաշագործ պատկե-րին անդր լինելոյ. լինի և միաբանն Ջառիձոյ հռչակաւոր ուխտատեղի ողջոյն վիճակին Շիրակայ, ունելով զամենայն ողջոյն զմեծագումար նուէրս ջերմեռանդութեան ժողովրդոյ.

Իսկ մատուռն սուրբ Յարութեան անուամբ, զոր յիշեցաք 'ի վերն, կառուցեալ յարեւելս սուրբ Գրիգորին Ճառիծից, որ 'ի բարձրաւանդակին 'ի վեր քան զայժմեան գիւղն Գ փիչող, շուրջ զորով եղեալ է հին գերեզմանատուն կրօնաւորելոյն անդէն՝ է այժմ խոպան աւերակ. և կախածոյ քարինք նորա փոխադրեալ յայլ շինուածոյն ակէտս, յետ աւերմանայն 'ի Թեմուլալոյ զօրացն Մահման խանին. միայն դերբուկք կարկառ մնացեալ քարակիր հիմանցն.

Եւ մատուռն երկրորդ՝ որ սահմանեալ էր պատարագել զՔրիստոս ամի ամի 'ի տօնի Տապանակին՝ յանուն Գրիգորի, վերանորոգողի ըզ մենաստանն 'ի հարիւրամեայ կործանմանէն, որպէս յարձանագրէն որ 'ի թուին ՌԽՄ. է 'ի վերոյ հատուածեալ վիմին սեպացելոյ 'ի մէջ կողմնակալն ձորակին, 'ի հարաւոյ վանացն, որ բաժանեալ երեք 'ի բարձրաւանդակ քարամայր բլրոյն, յորոյ

վերայ մենաստանին , որում և անմատչելի մարդկան , է փոքրիկ սաղաչէն , դուռն մի ունելով ՚ի հիւսիսոյ . այլ միջին դրութիւն նորա անյայտ մեզ , զի չե՛ք հնարաւորք լինանելոյ յաղագս հաստատուծելոյ նորա ՚ի ըլրոյն վերուստ մինչ ՚ի վայր , գուցէ յերկրաշարժութենէ անյայտ ժամանակի ։ Այսոյն որպէս վկայի, զի ինչ նշմարեալ են ՚ի ձակատ նորա , յոր ՚ի մերձենալն, աահն, անհետ լինի յաչաց , վասն ո՛չ լինելոյ տեղւոյ իրեք ՚ի կռուանս ոտից . զորմէ և մեք այսչափ տուեալ ծանօթս , չեղաք և առանձին ՚ի կարգս տեղագրութեանն ։

## Առաջնորդք կամ վանահարք Հաւուծոյ մենաստանին , ՚ի շինութենէ սրբոյն Գրիգորի մինչ ցներկայս ։

Տէր Համազասպ յաւուրս շինութեան սուրբ Գրիգորի , յորում ժամանակի հիմնարկեր նորա Սարգիս ձան . ՚ի թուականին եւրն ՚ՆԻԴ.. (975)

Զայր Գրիգոր առաջնորդ վանացն՝ յերկրորդ շինութեանն նորա ՚ի Հարթբաձեայ կործանմանէն, որում ինքնին այս Գրիգոր եղև վերանորոգող. Թիւ վախճանի նորին յամի Տեառն 1185. գերեզմանն սորա կայ և ցարդ ՚ի հին գերեզմանատան յարևելից վանացն, յորոյ վերայ դրոշմեալ է այսու արձանագրութեամբ.

«Այս հանգիստ երջանիկ ծերունի
«սուրբ հայր Գրիգորի առաջին ա-
«ռաջնորդի յերկրորդ շինութեան
«սուրբ ուխտիս, որ էր ուսուցիչ և
«առաջնորդ բարի անձնեցուն. աղա-
«չեմք որք երկրպագէք սորա խա-
«չիս, ասացէք, Ած յիշեսցէ զհայր
«Գրիգոր յաղօթութեան իւրում,
«և զվերջս, և զմեզ յիշեալ
«լիցիք ՚ի Քրիստոս. ամէն. ՚ի
«Թուին հայոց ՈԼԴ. (1185).

Զայր Պետրոս եօթն ամօք յետոյ քան զվախճան նորին Գրիգորի՝ առաջնորդ լինի վանացս և առնէ զամն երեսուն և հինգ. զի երևի յարձա-

նագրութեանցն առաջնորդել նորա 'ի թուին ՈԽԸ. մինչ ցՈԿԹ. որով երեւի յետ վախճանին Գրիգորի՝ սորա նստեալ. յորոյ եւ յիններորդ ամի առաջնորդութեանն՝ Զաքարէ Սպասալար կառուցանէ զկաթուղիկէ Աստուածածին եկեղեցւոյն յամին ՈԾ.

Գրիգոր վերջացեալ առաջնորդ- նաւի վանացս յամին Հայոց ՈՀ. յաւուրս Վաչէ իշխանի ազգականին Զաքարեայ.

Տէր Յովհաննէս ոմն առաջնորդէ մենաստանին յետ Գրիգորին վերնոյ յամի ՈՀԳ. յաւուրս սորա յիշատակի եւ ոմն տէր Համազասպ, գացէ 'ի միաբանից վանացն.

Հայր Համազասպ Է. առնու զառաջնորդութիւնն յետ վերոգրելոյ Յովհաննու բաց երկուց արձանագրութեանց, յամի ՈՁԴ.

Տէր Համազասպ եւ հայր Յովհաննէս յիշատակին յարձանագիր շինութեան նորոյ ժամատանն 'ի Հիջուայն Աշհրանից, այլ թէ նո՞յնք իցեն

վերոգրեալն եթէ ոյր՝ չեղեւ առա-
ջել, զի չէր թուական չնոււթեան
ժամանակն.

## Առաջնորդք Հռոմէից յինն և տասներորդ դարու (*).

Ստեփաննոս եպիսկոպոս Կամակ-
նեան կայնեցի, առաջին առաջնորդ-
երրորդ նորոգութեան վանացն Հռ-
ոմէից, այն է, յետ երկր հինգ հարիւր
ամեան եւ հինգ ամաց ամայութեան
այնուհետեւ յաւուրս գայլթ ակմանայն անդր

---

(*) Ի ուղղեան գրքում՝ նուաստ ընտ-
րեցաք զանուանցս Հռոմէից Սուրբէն Էրէց
շիրաւէոյէ. որք զեան անուրփանուլէան
Գործոյն՝ Եորյես ՚ի Խորգէ Լ.Հայաստան-
գոյն.

փոխադրութեանց յՕսմանեան տաճ-մնոյ յամի 1830 ․ որ մարդա-գարդեալ բազում աշխատութեամբ յաներանայն դպրատուն մանկանց, արար անդի և ընտրական հոգևորա-կան ուխտի և բարեգործեալ զմե-նաստանն բան առաջնոյ կարգի բա-րեզարդութեան իւրոյ ․

Սա յետոյ եղեալ յառաջնորդու-թենէ վանացս և գաղթականացն, կարգեցաւ առաջնորդ վիճակին Շի-րուանայ մասամբ 'ի վերջոյ աթոռոյ Առաջնորդութեանց Ղարաց 'ի Ռու-սաստան, բառ կարգադրութեան սի-նոդի Էջմիածնի․ ուստի և դարձ արարեալ վերստին յիւր նախկին վի-ճակ 'ի Սղմրին Շիրակայ, ընկալաւ զվախճան կենաց յամի 1841 ․

Պօղոս վարդապետ Ջալալեան՝ կարգի վանահայր վանացս յետ վախ-ճանին Ստեփանոսի․ յորոյ առաջ ընդ գաղթականացն եկեալ յա-ռաջնորդութենէն Ռուսեաց Հնձոց վանաց Ճանանչալու, առ մեզ

Ջաստիղայայի, և միաբանեալ էր անդէն 'ի Ջաւախ, ընդ իւր ընկերովն զՀրաշագործ պատկեր եօթն վերոյ անուանեալ Աստուածածնի. նկարեալ, որպէս աւանդութեամբ ասի, 'ի Ղուկասու աւետարանչէ. որ և ցայսօր ժամանակի պատուի 'ի Հաւատացելոց ջերմեռանդ ուխտաւորութեամբ, որոց նա խնամօք կառավարի մենաստանն ըստ ամ՝ կարևորայն. աս և այժմ կայ կենդանի անդր 'ի ծերունազարդ Հասակի.

Գրիգոր վարդապետ Ջամկոչեան 'ի նոյն գաղթականաց, յետ Պօղոս վարդապետի ընտրի վանահայր յաւուրս Նիկողայոս եպիսկոպոսի յաջորդի միաբանիցն Ճիլակայ, որ Հանեալ ապա 'ի վանահայրութենէ Հրամանաւ իշխանութեան Աթոռոյն Էջմիածնի, և անդր եկեալ և 'ի ներքոյ քննութեան անկեալ, փախչանի յՕշական գեղջ աթոռոյն յամի 1850.

Պողոս փութացեալ վերադարձաւ Տաղաքեան, վերստին յետ փոխձանին Գրիգորի, որ և այժմ ունի զվիճակահայրութիւնն, բայց զրկեալ յամենայն վանքական իրաւանց մենաստանին, զի այժմու կառավարութիւն այնորիկ և եկամուտք են 'ի ձեռս աշխարհականաց՝ կարգեալք 'ի կողմանէ հոգևոր իշխանութեան.

Ագարակք Հաւուծոյ մենաստանին յաւուրս առաջնոց հաստատութեանն, յիշատակեալք 'ի նուիրատուաց՝ ըստ արձանագրութեանց իւրոց 'ի զանազան ժամանակս.

Բայց երկու՝ Մ. Բուձ՛ն վերին, (այժմեան Թամըլէշ) 'ի Թաղն Խաչկանց. և

Զնձան նոյնին՝ նուիրեալ 'ի սուրբ Գրիգոր Հաւուծոյ՝ յԱստուածածնայ

յումեմնէ , յառաջնորդութենէն Հայր Պետրոսի , 'ի Թուին ՈԽԵ. (1196). Մ՝եկորիս անուն գիւղ մերձ 'ի սոյն գիւղս (այժմեան Պորմի գիւղ). Իբրև ամէն Հողով , Ջրով և արօտիւ , ընդհանրական կալուած Զա-քարեայ Սպասալարի , որպէս և հետագայքդ .

Տ՝րադայ մի 'ի Գ՝եօլիկ , որ դիւադայ կոչի , ասէ :

Տ՝րադայ մի յԱ՝նի , 'ի Գ՝ղի ձորին . Վարանեգ մի 'ի Ծ՝աղկոցաձոր .

Ա՝յգի մի յԱ՝շրեան . և

Ա՝յգի մի 'ի Թալին . Ա՝յսքիկ ամ յիշատակ Հոգւոյ Սպասալարին Զա-քարեայ՝ նուիրեալ 'ի սուրբ ուխտն 'ի մնունդ միաբանակցաց և 'ի կառավարութիւն վանացն , յաւուրս Հայր Պետրոսի յիշեցելումն 'ի վեր անդր . 'Ի Թուին ՈԾ. (1201).

Ա՝յգի մի 'ի Փարպի . և

Ա՝յգի մի ևս 'ի Տանձատաղեղ (Թուի յայժմեան) . նուիրեալ

յիշատակ 'ի Մուշէ իշխանէ և յա-
մուսնոյ նորա 'ի Մամա խաթու-
նէն, 'ի հիմնադրոյ Տեղերու վանաց
որ յԱրագածոտն, յառաջնորդու-
թեան Գրիգոր վարդապետի 'ի
թուին, ՈՀ. (1221)։
Նոյն Լաւզրի որդւոյն շինեալ
Աշխեան 'ի Մխիթարայ յաւանին.
և յիշատակեալ ունելի յաւուր
ամէն Յ վճռանու. 'ի թուին ՈՀԳ.
(1:24 ։
Նոյն մի 'ի Նորաշէնիկ, նուիրեալ
'ի Սանասարայ և 'ի Պաղդասարայ՝
յորդւոց Խուպասարի ուրում 'ի
ժամանակս Համազասպայ երկրորդի.
'ի թուին ՈՁԴ. (1235)։
Նոյն Խուպապարենց մին 'ի չորից՝
շինեալ 'ի Տիգրանայ յամէնին և
առեալ 'ի յիշատակ Հաւերձ յա-
ւուրս վերջնոյն Համազասպայ, ան-
թիւ։
Ձիթահանք մի շինեալ յօգուտ վա-
նուցն՝ Աշխաթարու անուն բարե-
պաշտէ յամէնին, 'ի թուին ՉՁԳ.
(1334)։

# Տեղադրութիւնք եկեղե-ցեացն Հառիճայ:

Մենաստանն Հառիճայ, առ մեօք Կ փշաղայ վանք, յաղագս որ ա-նուն գեղջն նորին անուանակոչու-թեամբ, 'ի հարաւային մասին Շի-րակայ, է 'ի հիւսիսային լանջս Արա-գած լերին, 'ի բարձրութեան անդ-ընդարձակ հովտայն, որք յերկարա-ձգին ցդաշտն 'ի սորին. յորոյ յա-րեւմտից երկոքին կողմնակաւն ձորակք քարաժայռք իջանեն 'ի գետ 'ի վայ-րէ լանջայն և միանան առաջի բար-ձրաւանդակ բլրոյն, ուր Մենա-ստանն. ուստի և վտակք ականակիտ աղբերաց խոխոջեալ գնան ողջոյն, վայելչացուցանեն զվայրն 'ի տեսիլ. այսպ ըստ լեռնաւոր օդոյն պար-զութեան և դրիցն հայեցուածոյ ընդ-ամենայներձ դաշտավայրայն զուար-ճութիւն. որ 'ի սորին Մենաստանին

մինչև ցորչափ հիւսիսային ծաղկաց լայնութեանն 'ի սփիւռ տեսանեն :

Յայսմիկ բարձրութեան լանջակողման լերին՝ է մենաստանն Հառիճոյ գեղեցկայարմար դիրք փոքր ինչ խոնարհ քան զլեռն, 'ի ձորաւաշին շրջապատ պարսպաւ և որ 'ի նմա եկեղեցիք՝ այսու հրաշակերտութեամբ և յայս ձև օրինակի :

Եկեղեցին կաթուղիկէ անուանեալ Աստուածածին՝ կառուցեալն 'ի Զաքարեայ Սպասալարէ, (*) է

(*) Եղբայր Իւանէի Հօրն Մախաթանեան՝ զորդւոցն շինութեան Հառիճոյ նախարարն Զաքարիայի եկեղեցւոյն՝ որ 'ի Վանքն Հեջոոյն Մարիամայ, յերկրի հոն դղեկոնեան հանդէպ Զաքարիայի՝ 'ի Զաքարեայ. դէ 'ի հնմարանի տարեգրութեան ժամանակ յերկիրս հատոր մատենին երես, եր. 262. Հայկական տեսութեամբ գիրք. «Եկեղեցին որ շինէ շինեցաւ 'ի Զաքարեայ Հօր Սպասալարէ, է նորին՝ ներքին —

քառակուսի համաչափութեամբ 'ի քարին և չորս քայլս, սեղանին և հրաշակերտ կաթողիկէիւ, հաստատեալ 'ի վերայ չորից որմնասեանց, որք յառաջացեալք են յորմոյն՝ ընդ մէջ եկեղեցւոյն։ Առաջին երկու որմասիւնքն կից են սեղանոյն 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ կողմանց. իսկ երկու

---

[illegible] 269. [illegible]

ահրիմնեայքն՝ կէս ահրիմենան մեր-ձաւորքն, որք գործաւորք են չա-րեաց փորրիկ միապաղաղ կամակա-կալ սեամբք դրաւադաւոր չքնաղա-կօք իբրև պատշգամբք նոյին, գա-ռածն բաց ունելով ընդ մէջ եկե-ղեցւոյն յերկուց կողմանց ահրիմնեայ գրան տաճարին. և ունին ՚ի մէջ

---

նորա ճեղքն. Մանաւանդ զի՝ յարձա-գէրն ընդունենան խոնարհէ Աղուա-ծածքն աստուէլ և հասարակ զարդ, որ ՚ի Հէբրայ ճախտաւո գրան այնորէ յառէհ. «Շնորհիւ Աղուանից և Օտարէ Ալէր Սպասաւոր ընէշի ղծանեղէ» Բառայս այս մատյանշ էրէ աէհ հօր Շահնանդեան՝ [illegible] էնէղէշէ ընէնալ ՚ի Օտարեայ. էրէ [illegible] և յառաջ էէրէ [illegible], որդէս [illegible], զարձանգէր ընդունենան ճամարան ՚ի Սահրատայ.

Իսկ Սարգիս Հարրադէս Դաւութեան ծողոմող արձանագրութեանց էնէղեցեայ ծողմանցն Շէրաճայ և ապարագրող նորէն.

գիշերին լուսաւորաւոր բոլորշիս, պատ-
րաստեալ թերեւս անդի աղօթից
ամենայն Հայոց. յոր երանեն քա-
րեաց սանդղովք կցելովք ընդ որմն՝
ոլորածու մի ընդ մի աղխաղխելովք.
բառ այսմ՝ գրութեան ապա և մի-
ջին փայտ տաճարին սիւն առ սիւնէ
կարի ընդարձակ. 'ի գլուխ սեանցն
չորից՝ են չորք եռանկարդ կամարքն
անկիւնաւորք, 'ի միջոց որոց և կող-
նաձիգ բոլորշի կամար գմբեթին.
միջին և ներքին խարխափք սեանցն

'ի ներքոյ գրութեան. 'ի համառօտախօ-
սութեան [illegible] Գրեթէ՝ [illegible] երևէ
[illegible] Լուսաւորչին [illegible] 'ի
[illegible] զայնմանէ, զի ո՛չ միայն ո՛չ յե-
ղանակէ [illegible] շինութեան ժամա-
նակին 'ի Սահակայ, այլ և [illegible]
[illegible] շինութեան [illegible] 'ի
[illegible]

են հնդկաց խորշիւք, մանր և մեծ շրջանակօք ։

Չորք լուսամուտք միայն են եկեղեցւոյն 'ի չորից կուսէ, նեղ և երկայնք. և յերկոսին կողմանս հարաւայնոյն և հիւսիսայնոյն՝ երկու ող բոլորշի լուսամուտք, լայն 'ի ներքուստ և նեղ արտաքուստ. երկու ևս խորանք յաջմէ և յահեկէ սեղանոյն, և երկու 'ի գլուխ նոցին, որոց դրանք բացեալք ընդ մէջ սեղանոյն, և երկու ևս խորանք յերկուց կուսէ արեւմտեան դրան 'ի ներքոյ յիշատակեալն վերնայարկոյ՝ միով բոլորշի լուսամտօք ։ 'Ի ձախակա հիւսիսայնն խորանին կայ գիր յիշատակաց, որ 'ի կարգս արձանագրացն ։

Մ՛ի սեղան միայն ունի տաճարն(*), տեղի մատուցման սրբազան խորհրդոց

---

(*) [illegible]

պատարագին. այլ չէ՛ր նորա աւա-
զան մկրտութեան, որպէս և յայլ եկե-
ղեցիս Շիրակայ՝ կառուցեալ առ
Բագրատունեօք. (*) 'ի հաստատակու-
մանն դասու՝ գոյ աւազանաձև պա-
տուհան կամարաւոր, ուր բազմեցա-
ցանեն զարդիս զեօթն մերայ պատ-
կեր սուրբ Աստուածածնի, զորմէ 'ի
մեր անդր գրեցաք.

Յաւուրց անյայտութեան եկեղե-
ցւոյս ո՛չ գոյր խաչկալ սեղանոյն,
այլ զոր ետ փայտակերտ կերտեալ
Ստեփաննոս եպիսկոպոս Խաժակ-
նեան առաջնորդ միջին նորո-
գութեան նորա, այժմ հաստա-
տեալ է 'ի սեղանին սուրբ Գրիգո-
րի, զորմէ 'ի նորին տեղագրութեան.

---

(*) Յաշխատասիրութեան տեառն 'ի առաջնորդա-
ցան տեղւոջ նորոգ շինեցաւ տաճարն
Վերատեսչութեան արքեպիսկոպոսի Եպիսկոպոսաց տեա-
ռոջ Տէր Սիմոն քահանայի եկեղեցւոյն,
որ և կենդանի է շինութեան մնա-
ցուածին.

Իսկ 'ի յետին աւուրս յայտնի կանգնեցին խաչիւ գեղեցիկ ըստ օրինի հաստատեալ ձեւոյ վայելչու- թեան՝ բարեպաշտ անձինքն ընկեր- շանեաք 'ի շինութիւն և 'ի բարե- զարդութիւն որոց մենաստանին, զորս և զանուանս յիշատակեալ եմք 'ի ներքոյ 'ի գործս բարեպաշտու- թեան նոցա ։

Ճակատ բեմին է միախիտ քա- րամբք քանդակագործ փորուածովք մանրանկար ծաղկանց 'ի վերայ, որք քառակուսի հատուածովք ագխա- կերպ էին ձեւով զատեալք են 'ի միմեանց ։

Դուռն տաճարին է մի յարեւմ- տից, որոյ ճակատն է եռանկիւն կա- մարաձգութեամբ և սիւնազարդ, 'ի մէջ առաջնումն կիսաբոլորակ կամա- րի է համառօտ արձանագիր շինու- թեանն տաճարիս թուականի, օրինակ զայս, «Շնորհիւն Աստուծոյ ես Զաքարէ Ամիր Սպասալար շինեցի զկաթողիկէս», և 'ի ներքոյ սորա

’ի կիսաբոլորակ միմին բարաւորի` այլ արձանագրի, որ ’ի կարգս արձանագրաց ։

’Ի վերայ այն արեւմտեան որմոյ եկեղեցւոյն արտաքուստ որ ընդ մէջ ժամատանն, են այլ և այլ արձանագիրք յիշատակառաց` երեք կարգք յաջմէ և յահեկէ դրան տաճարին, որպէս և ’ի վերայ հիւսիսային որմոյն` ընդ արձանագիր շինութեան ’ի Զաքարեայ հանդերձ թուականաւ ։

## Արտաքինք եկեղեցւոյն ։

Գմբէթն արտաքուստ է կարի բարձր, անկիւնաւոր և սրածայր ․ խաչ ’ի հնոյ արծաթապատ ունելով ’ի գլուխ ․ ’ի մէջին շրջապատան, ուր են չորեքին լուսամուտք, են և չորք փոքրիկ լուսամուտք բոլորշիք փորուածոյ շրջանակօք, և միջոցք նոցին սիւնազարդք, սրանկիւն կամարս ’ի գլուխ ունելով ․ և գիրք գմբէթին է յիսուն քայլ ’ի լայնութիւն ։

Յարևելեան Ճակատու եկեղեցւոյն, յորում են լուսամուտք սեղանոյն և խորանայն, են անասելի և շրջանակաւոր կամարք կիսաբոլորակք, և եղեալք լուսամոյն քանդակագործք են քառանկիւն շրջանակօք. որք խաչաձև ամփոփեալ երկուստեք ընդ նեղ և ընդ լայն, հասեալ են չկամար տանեայն, յորոց ՚ի ներքուստ ձևացեալք են այնոքիկ կամարք, խաչթևաւոր և աղանի թևարձակ ՚ի վերայ նորա, և անտի երկոյն տաւոք կիսաբոլորակ թողլով կամարս, ՚ի գլուխ լուսամուտոյն խորանայ անդանեն յաջ և յահեակ ՚ի հիւսիսային և ՚ի հարաւային որմունս եկեղեցւոյն, զորոց տարեւ.

՚Ի բարձրութեան անդ արևելեան Ճակատու եկեղեցւոյն ՚ի ներքոյ տանեայն կամարի, որ սրանկիւն ամբարձեալ, ՚ի վերայ քառակուսի միապաղաղ սեանց վիմի են դրուագաւոր արձանք քաջագոր Սպարապետայն Զաքարեայ հիմնադրի եկե-

զերցուոյն և եղբօր նորա Յուանեայ՝ աՀարկու և շքեղափառ կերպարանօք և երկձեղ ալեայն փառաւորութեամբք, խոյր զինուորական 'ի գլուխ ունելով, յորոյ աՀեղ դէմ առ դէմ Հայեցուածոյն և ցայժմ իսկ նշմարին մնեմ 'ի շինութեան նորին երբեմն 'ի մերոյ մամլին Հայաստանեայց:

Այլ և բարձրաՀասակ դիրք մարմնոյ նորին և քաջագանգուր Հերք գլխոյն յուսոց մինչ 'ի լանջս կոյս, և պճնեալ զգեստ պատերազմական Հաստատեն մեզ զերիտասարդական Հասակ տիոց նորա, յորոյ մին 'ի Հարաւոյ և միւս 'ի Հիւսիսոյ կողմ, զի մի բազուկս ամփոփեալ ունին 'ի մերոյ սրտից խորեանց, և զորս ընդ որմն ունին բազուկս, երկայնեալ երկուստեք, կալեալ ունէին նախ-քան զամն ինչ զարձան Աստուածամօրն կուսի, յոր անուն կառուցեալ է եկեղեցին, որ այժմ անկեալ դոլով, ագուցեալ են յեմինք 'ի տեղի նորին զխողովակ 'ի պէտս անձրևոյ:

Յետոյ արձանին եղելումն 'ի Հարաւ կուսէ, է անդրի մատակ տախեծու, նստեալ դէպ ուղիղ յար-ձանն յառաջինկաց. ունի 'ի գլուխ իւր զթագ արքայական և թեւս ամ-բարձեալ ընդ ուս։ Այս անդրի օրինակ բերէ Թագաւորին Սբայ պաշտ-պանին Օսիրեայ. կամ որ նոյն է, արքայական նշան նոյա, և ըստ այսմ հաւատալի է, թէ, արձանն հա-րաւային՝ իցէ Օսիրեայ, վասն զի 'ի մեծի արձանագրին շինութեան տաճարին ասի 'ի բերանոյ նորա, «յաղագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թագաւոր Թագուհ-ւոյ»։ Նա զի և արձանն հարաւային ահարկու ևս է դիմօք քան զհիւսի-սայինն իւրովն առեալ վեհ հայեցուա-ծովք, ըստ որոյ և կարծես թէ, նո-րոգ դարձ արարեալ 'ի պատերազմէ Պարսից, և յաղթանակեալ 'ի ձեռաց նոցա զԱրարատեան զնահանգ, 'ի մէջ յաղթութեան փառաց և վառա-կոյն խանդմանց զդէմն երևեցուցանէ։

Շրջանակք զորոյ տաճարք, անցեալ յաջ և յահեակ կողմանս եկեղեցւոյն, խորանաւորք ձևացեալ ՚ի քարինս, հիւսիսայինն յար և նման է արևելակողման նորին զարդու և խաչաձևութեամբ, բոլորշի շրջապատութեամբ ՚ի գլուխս լուսամատոյն. և ՚ի միջին վայրի խաչ ձևացեալ ընդարձակին կամար տանեայն. իսկ հարաւայինն նուազ քան զերկուսին կողմանցն և կարի սակաւ կամարաձևութեամբք։ Սյամ և Յովհաննավանոյ որ յԱրագածոտն՝ ձեռք մի լեալ կարծես ճարտարապետաց ՚ի գլուագս քանդակագործութեանց քարանց, զի մի են գրեթէ երկուց տաճարացս արտաքին փորուածք։

Յերկս յայսոսիկ կողմանս եկեղեցւոյն են երկո՛ւ երկո՛ւ խորշք ձևացեալք յորմն կոյս. և կիսակամար դրուագաւոր ՚ի գլուխս, որք ՚ի ներքուստ ունին յառաջոյ խորանաց զչորեսին որմասիւնսն կաթողիկէին. այսոքիկ խորշք թողեալ են յետուստ

սեանցն, զի մի՛ ծանրասցի շինուածն, և նմա յաջմէ և յաՀեկէ լուսամուտն մեծայ ։

'Ի ներքին Թեւս Հարաւոյին արևելեան շրջանակին, որ շրջապատեալ զեզերս տանեաց եկեղեցւոյն, յետուստ առխծուն յիշելոյ, փորագրեալ է 'ի ծաղկանկար շրջանակին ծաղկագիր տառիւք այս բան «Աւեգոյս Աստուած ողորմեսցի աշխատաւորաց ամէն» (*) ։

Բովանդակ այս շինութիւն կաԹուղիկէ Աստուածածնին դրուագազարդեալ այսպէս և խաչազարդեալ, որպէս տեսցուք, են մԹնագոյն կարմիր և սևերանգ կապտագոյն քարամբք՝ անՀնարին մանրուցմամբ յօրինեալս, և այնպէս յղկեալ և յարմարեալ շարուածն, մինչև տեսողաց Թուիլ զամենայն լերկ 'ի մի քար յեռեալ ։

---

(*) Զի՛զի Հնար իմանալ զմա ճաին՝ ձեզոյս, զոր ձարէ էւ ըննութեամբ ընթերցուս ։

## Արձանագիրք կաթուղիկէ եկեղեցւոյ Աստուածածնին Հառիճոյ։

Ի վերայ հիւսիսային որմոյ Տաճարին յարեւմտից կուսէ արտաքուստ.

### Արձանագիր շինութեանն(*)։

«Շնորհիւ եւ ողորմութեամբ «մարդասիրին Աստուծոյ ես Զա-«քարէ Մանդատոր Թախուցէս «Ամիր Սպասալար Հայոց եւ Վրաց, «որդի մեծի Սարգսի, գանձագին «արարի զհռչակաւոր սուրբ ուխտս «Հառիճոյ յետ բնական հայրենա-«տերացն յաղագս կենդանութեան «տեառն իմոյ բարեպաշտ Թամար «թագուհո եւ փրկութեան իմ. եւ «հարազատ եղբաւր իմոյ Իւանէի եւ

(*) Հ. Ղ. Ալիշեան [illegible]

«զաւակաց մերոց Շահնշահի եւ
«Աւագին եւ ծնողաց մերոց, շինեցի
«՚ի սմին ամրոց եւ զկաթողիկէս
«բազում ծախիւք. եւ զարդարեցի
«ամենայն սպասուք եւ սրբութեամբք,
«եւ զիմ գեղն որ էր մերձ ՚ի սուրբ
«ուխտս զՍոկորեան (*). ընծայեցի
«սուրբ Աստուածածնիս բոլոր ամէն
«հաղահատովն, սարովն եւ ջրովն,
«զոր ընտակամն լեալ է. եւ եւս ջա-
«ղաց մի ՚ի Գետառիկ (**). որ դիւա-
«ղաց կոչի. ջաղաց մի յԱնի Գեղի
«ձորին. եւ պարտէզ մի ՚ի Ծաղկա-
«ձորին, այգի մի յԵրեւան, եւ այգի
«մի ՚ի Թալին. եւ զառաջին սահ-
«մանքն որ բուն լեալ էր, հաստա-
«տեցի ՚ի սահմանախաչէ ՚ի Հա-

---

(*) ՚Ի տպագրութեան Հ. Շահ-խաթունեան, ընթեռնումք զանուն գեղջն՝ Սողորեան, զոր մեք ըստ արձանագրին բաղդատեալ՝ գտաք ըստ այսմ լինել՝ Սոկորեա։

(**) Շահն. գնէ, «Գետառն»։

«ուխտից դէտն, կոռ (*), մարդով,
«գրերումն, յանձնք հօրով, Ճինողին
«շարումն, գանձից հարումն, արեն(**)·
«աղբերով, հին Հաւլխնով · եւ
«եդի սահման քաջս, որ յաւագ խա-
«րանն պատարագել զ՛Բրխասս
«յիմանան հանապազ · Արդ՝ որք
«հաստատ պահեն զ՛յիշատակս մեր,
«աւրհնեին յԱստուծոյ եւ յամենայն
«սրբոց · իսկ որք հակառակեն եւ
«հանել ջանան փոքր ինչ կամ մեծ,
«զանէծս Կայենի եւ զՅուդայի ժա-
«ռանգեսցեն եւ կրկին նզովեսցին
«յԱստուծոյ · Թէ որ բռնութեամբ
«եւ ուժով առնեն · յոր Հայրապետ-
«ացն եւ յամենայն սրբոց եղիցի
«նզովեալ · Ամ. Գրեցաւ կտակս
«հաստատ ՚ի Թուին ՈՆ (1201)·

(*) Հ. Շահխ. ունի «ճռռա»·
(**) Ալիշ. «արէան աղբերով»·

Ի ճակատ դրան աջակողմեան խորանին՝ յեկեղեցւոյն ըստ հիւսիսոյ.

«Այս Արտաւան ծառայ Քրիստո-
«սի եւ ամուսնով իմ՝ Նուրաթի,
«մեծ յուսով ստացաք զփոխադարձս
«ընծայ սուրբ եկեղեցւոյս. եւ սպա-
«սաւորք սուրբ ուխտիս աղաչեմե-
«ցին մեզ յամենայն ամի չորս ար
«պատարագ. Ա. առ ինձ եւ Ա. Նու-
«րաթին . . . կատարեսցէք արժանին
«Աստուծոյ.»

Ի ճակատ արեւմտեան դրանն արտաքուստ, որ անկանի ՚ի մէջ ժամատանն, ՚ի վերայ կիսաբոլորակ մեծագործ վիմին, որպէս ասացաք.

Ի թուին ՈԿԳ.

«Կամաւն Աստուծոյ մեք Ճաւ-
«ձեցաք հայր Պետրոս եւ այլ միաբան

«եղբարքս հաստատեալք յաւիտե-
«նից կտակ անջնջելի մինչ 'ի գա-
«լուստն Քրիստոսի, եւ եղաք սահ-
«ման անխախտ, եթէ հայր ոք փո-
«խի առ Քրիստոս, գիշերապաշ-
«տաւն եւ Գ․ քառասունք եւ թէ
«երէց կամ կուսակրաւն աբեղա,
«Գ․ քառասունք ապաշխարողի, Ա․
«Խ․ մատղն, Ա․ աւր ժամ, հաւր
«եւ ամէն եղբարց, որք հաստատ
«պահեն, աւրհնեին 'ի Քրիստոսէ․
«որք հակառակեն, դատին 'ի յԱս-
«տուծոյ։»

## Կից այսմ յաջակողմն 'ի վե-րայ նոյն որմոյ։

«Կամաւն Աստուծոյ եւ Տուտիկս
«մեծ յուսով միաբանեցայ 'ի սուրբ
«ուխտս․ եւ ըստ իմ կարողութեանս
«ետու ընծայք սորա Աստուածա-
«ծնիս․ հայր Յովհաննէս եւ միա-
«բանքս հաստատեցին վկայութեամբ

«տէր Համազասպայ 'ի տաւնի վար-
«դաւառին զամենայն եկեղեցիքս յիմ
«անուն պատարագել զՔրիստոս.
«ով խափանէ, իմ մեղացն տէր է.
«կատարիչք աւրհնեալ եղիցին.
«ամէն:»

## Ի Ներքոյ սորա.

«Ամառն Աստուծոյ եւ յաշխար-
«հակալութեան Արղունոյ Ղանղա-
«զանեան ես Սոլխութլու որդի Զա-
«ղանին եւ իմ որդի Սպաշէս եւ
«Խաթունս՝ Խոդլու միաբանեցաք 'ի
«սուրբ Աստուածածինս. եւ զմեր
«բաժինն դանձով շինած ձիթհանքն
«տուաք եկեղեցուս լոյս լուսով ընկ.
«ո՛չ իմ որդու, ո՛չ իմ եղբաւր, ո՛չ
«իմ ազգի մարդոյ դաւի չկայ. ով
«դաւի անէ, յԱստուծոյ եւ 'ի փե-
«ղամբարաց նզովեալ է. կատարիչք
«աւրհնին յԱստուծոյ. 'Ի թուին
«ՉՁԳ.:»

## Հեռի ՚ի սմանէ յանկեան:
## ԴՈՀ:

«Ես Մաչէ որդի Սարգսի եւ
«մայրն իմ՝ Սանա խաթուն տուաք
«Ի. ազդի ոսկի Աստուածածնիս
«՚ի Փարալի եւ ՚ի Հաձատաղեղ.
«մեծ յուսով. եւ միջնորդութեամբ
«Գրիգոր վարդապետի եւ սուրբ
«եղբարց հաստատի կամաւն Աստու-
«ծոյ. ընկալաք եւ զայլ արդիւնս,
«եւ սահմանեցաք զծառապարդարն՝
«Մաչէի, եւ Պադարու տանն՝
«Սանա խաթունին ամէն եկեղեցիս
«անխափան. եթէ որ խափանէ,
«պարտական է մեղացն :»

## Ի ներքոյ սորա :

«Յանուն Աստուծոյ ես Աղանս
«միաբանեցայ սուրբ Աստուածածնիս,
«եւ շինեցի յիշատակ ինձ եւ ծնո-
«ղացս իմոյ՝ զխաչքն :»

## Ժամատուն կաթուղիկէ ե-կեղեցւոյն՝ ՚ի Հիջուսն Վահրամայ:

Այս կաթուղիկէ անուանեալ Աս-տուածածնի եկեղեցւոյն առ դրանն արեւմտեան՝ է հրաշակառոյց ժամա-տունն (*) շինեալ յետոյ քան զայն ՚ի պարոն Հիջուսն Վահրամայ իշխանէ, որպէս գրեալ է մեծ քան զեկեղեցւոյն, եւ է քառակուսի, քսան եւ չորս քայլ յերկայնութիւն եւ ՚ի լայնութիւն. հաստատեալ ՚ի վերայ չորից միապաղաղ բոլորշի սեանց, որոց առաջին երկու արեւելեայքն են սեաւ քարինք հանդերձ քառանկիւն մրմախարսխօք, այլ ներքնախարիսխ

(*) Հայրն Ր. ահեկանութեան միոջ անուանէ Գաւիթն կոչէ ժամատունն, ըստ դէմ հա-սարակեալ ողորմութեանց պատմագրաց. զի ի սա հասարակ ՚ի կէս ատենան ու-յանագիրս ժամատունն անուանէ:

նոցին որոշ 'ի սեանցն, և 'ի կարմիր քարանց. իսկ մերձին երկու արեւմըտեանքն՝ կարմիր քարինք համեղերձ մերմնախարսօք, այլ ներքնախարխաք սոցին 'ի սեաւ քարանց հակառակ առաջնոյն։

'Ի չորից անկիւնաւոր կամարայն կցայցելոց 'ի գլուխս չորից սեանց՝ է քառակուսի, ծոյաւոր և քերուբաքանդակ 'ի խո՛րշս խո՛րշս սրածայրս և ոլորածոյս՝ կիսադմբէթեայ լուսամուտն, որ 'ի ներքուստ 'ի կամարաց և անդր 'ի վեր քաղելով գործեալ, բարձրացուցեալ են քան ըզտանիսն 'ի միջավայրս չորեցն սեանց անօրինակ այնպէս քանդակագործութեամբք։

'Ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ սեանցն՝ արկեալ են այլ կամարք դէպ յորմունսն, որոց մի գլուխք սկսեալ 'ի խարսխացն սեանց, աւարտեն յորմասիւնսն, որք 'ի չորից կուսէ հաստատեալք յորմունս, յառաջացեալք են սակաւ ինչ յեկեղեցին, երկու եր-

կու եւս այլ կանոնք ձգեալք յարեւմուտս եւ յարեւելս կոյս՝ հաստատեալքն այնպէս 'ի վերայ որմատեանցն ։

Լուսամուտք են մի մի 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ եւ երկու յարեւմտից, յորոց հարաւայինն փակ· զի կից է արտաքուստ այլոյ որմոյ՝ հին եկեղեցւոյն Ճառաքձոյ սուրբ Գրիգոր շինեալն 'ի Սարգիս ձեռնէ, որպէս ասացաւ, բարձօք յառաջ քան զայսոսիկ ։

Սորա եւս է մի դուռն յարեւմտից, եւ մի խորան 'ի հարաւ կոյս եկեղեցւոյն, յորոց յարեւելից է սանդղաւոր ճանապարհն անձուկ 'ի միջոյ որմոյն, ընդ որ ելանեն 'ի տանիսն։

Յարկ ժամատանս կամ՝ ձեղունքն ընդ մէջ միշտակեալ կամարացն է հաստարածածք միօրինակ բարձրութեամբ. բայց քարինքն է՛, որ աղեւսակերպ քանդակաւ փորուածք. եւ է՛, որ խաչաձեւ դրուագեալք պարմանակի մածուցմամբ յիրեարս, մինչեւ երեւել ամենայնն 'ի մի վէմ քան-

դակեալ. քանզի գքարինս հաստածոյս հաւասարածածկ առնել ՝ի յարկս շինութեանց՝ դժուարին իմն է, և նորին ճարտարապետութեան գործ. յորս որպէս ասի աւանդութեամբ, ապացուցեալք են ՝ի փորուածս այսոցիկ քարանց՝ գոյն զգոյն ապակիս ըստ չափու մեծութեան և փոքրկութեան նոցին.

Արտաքին տեսք ժամատանս աննըման է ամենևին ներքնոյ շքեղութեան նորա, զի չունի զարդս և դրուագաւոր շրջանակս ըստ եկեղեցւոյն, այլ քարինք շինութեան ըստ ամենայնի նման են նմին, զի երևին երկուցն ևս ՝ի միոյ հանքաց.

## Արձանագիրք ժամատան կաթուղիկէ Աստուածածին եկեղեցւոյն ։

Արձանագիր շինութեան ժամատանն յորմն արեւելից ՚ի ներքս .

## Ի ձախակողմն դրան եկեղեցւոյն ։

«Աստուածասէր եւ արդիւնաւոր
«Պարոնն Ջիջուալ Սահրամ շի-
«նեաց զվայելուչ ժամատունս եւ ե-
«բեր զկիւս ջուրս յիշատակ հոգւո
«իւրո եւ զաւակաց իւրոց եւ ամուսա-
«նոյ իւրո Թամարին. եւ ետէր Յով-
«հաննէս միաբանութքս ՚ի ննջելոյ
«դստերին իւրո Խաթունին հաստա-
«տեցին ՚ի տաւնի Թէոդոս թա-
«գաւորին զմիայն եկեղեցեաւքս անուն
«Թամարին պատարագել զՔրիս-
«տոս անխափան. կատարիչքն աւր-
«հնին յԱստուծոյ. Թվ :»

## Ի վերայ հարաւային որմոյ ժամատանն :

«Ամման Ռստումոյ եւ Մխիթար
«գնեցի Ջրեւանն զՀաւազրին որդւոյն
«այգին յարդեանց իմոց, եւ ետու
«Քառինձոյ, եւ տէր Յովհաննէս եւ
«միաբանքս սահմանեցին 'ի տարին
«Գ. աւր պատարագ ..... անուն.
«եւ Բ. աւրն ինձ առնեն անխա-
«փան կատարիչքն աւրհնին Ռստու-
«մոյ. որք խափանեն, դատին 'ի
«Քրիստոսէ. Խոսրգլեալ շարաթ
«աւրն առնեն զժամն. 'ի թվ. ՌՃԳ»

## Ի ներքոյ այսորիկ :

«Ես Գրիգոր սնուցած մեծին
«Սարգսին դստերն Ներքինին, տուի
«աւետարան զուգաւք 'ի սուրբ եկե-
«ղեցիս ողորմութեամբ ... իմոյ. եւ
«հաստատեցին 'ի տարին Գ. աւր
«պատարագ. Բ. աւրն ինձ. եւ
«Ա. աւրն Խանումհաչին. 'ի թուին
«ՌՃԳ.»

## Ի ներքոյ վերնոյն :

«Ես Երանէն սնուցած պարոն «Մելքոնն, ընծայեցի արդիւնս 'ի «սուրբ ուխտս. Ի. որ պատարագ «լինի, եւ Ե. խուշուշն, կատարեն «զյիշատակս մեր :»

## Յորմն հիւսիսոյ :

«Կամաւն Աստուծոյ եւ Մանտասար «եւ Նազդաստր որդիք Խուպաստ-«րին 'ի յառաջնորդութեան Հայր «Համազասպայ ընծայեցաք 'ի սուրբ «ուխտս զմեր հայրենի դրամադլին այ-«գին որ 'ի Սորաշենիկ սրտով. ով «հակառակ կայ կամ ի խափանել մերոյ «կամ յաւտարաց, նզովի առցէ 'ի «տեառնէ Յիսուսէ. եւ հայրս եւ «միաբանքս հատուցելն, որ յետ «Աստուածածնի Ժ. աւր պատա-«րագ. Ի. աւր Խուպաստրին, «Ի. աւր Միմեթին, Ի. Յով-

«Հաննէսեան, եւ Գ. Սանտուրեան.
«որ զյիշատակս մեր խափանէ, դա-
«տի ՚ի Քրիստոսէ ամէն. Հաստա-
«տեցաւ կտակս ՚ի Կամայ. ՚ի Թուին
«ՌՁԴ.:»

## ՚Ի Ներքոյ սորին։

«Այս Տերտուր մեղուցեալ ծառայ
«Քրիստոսի ՚ի քրտանց խնոց գնեցի
«զԽուպատարեանց այգոյն չորեքն
«մին. եւ ետու ՚ի սուրբ ուխտս.
«եւ հայր Համազասպս սահմանեաց
«որ ՚ի տաւնի Անդրէի առաքելոյն
«Գ. ամ պատարագ առնեն. որ
«խափանէ, դատի ՚ի Քրիստոսէ:»

## ՚Ի Ներքոյ այսորիկ։

«Այս Սիմէոնս արդիւնք ետու ՚ի
«սուրբ Աստուածածինս. եւ հայր
«Յովհաննէս եւ միաբանքս տուաք
«Ի. պատարագ. ՚ի տաւնի սուրբ
«Անտոնի. Ա. Սիմէոնի, Ա. Գրի-
«գորոյ. կատարիչքն աւրհնեալ եղի-
«ցին ամէն:»

## Հին եկեղեցին Հառիճոյ սուրբ Գրիգոր ։

Հին եկեղեցին Հառիճոյ կոչեցեալ յարձանագիրս՝ ուխտ Հառիճոյն, եղեալն յառաջագոյն ՚ի շինութեան քան զկաթուղիկէ Աստուածածին ՚ի Զաքարեայ, է անուամբ սրբոյն Գրիգորի կառուցեալ՚ի Սարգսեան ձ՛նէ յառաջնորդէ Հոռոմոսին վանաց ՚ի տասներորդ դարու իբր յամի Հայոց ՆԻԴ. (975). որպէս հաստատեցաք ցայս վայր բազում ապացուցութեամբք ։

Այս եկեղեցի սուրբ Գրիգոր՝ է՛ կից ժամատանն նորոյ՝ յարեւմտից հարաւոյ այնորիկ. ունի զմի դուռն միայն յարեւմտից, զոր փակեալ ներկայք (*), յաղագս շինելոյ առաջի

(*) Պօղոս Վարդապետ Զաքարեան վանն Խորոյ անձնական աշխատութեան հատուցեալ է շինելով փոքրիկ սա երէ սրբոյն Գրիգորի, որով և փակեալ դրանն նորա ։

նորա արտաքուստ զսենեակ էին , բայց եւս են զհարաւային արեւմտեան անկիւն նորայ ժամատանն , 'ի մէջս նորա երթեւե՛կ առնեն անդր 'ի սուրբ Գրիգոր ։

Ձեւ եկեղեցւոյս է խաչանման բըրգաձեւ թեւովք , անխուն , բոլորշի եւ կարի փոքրիկ ։ Հիւսիսային թեւ սորա նալլին բոլորակութեամբն յառաջացեալ ընդ մէջ ժամատան նորայ յարեւմտեան անկեան 'ի հարաւոյ նորա , հաստատէ՛ առնէ եւ արդ յաչս տեսողաց , թէ սոյն այս ժամատուն կարի յետոյ է շինեալ քան զսուրբ Գրիգորս այս ։ որպէս յայտ է 'ի թուականացն ։ 'Ի չորեսին թեւան են մի մի լուսամուտք , այլ հիւսիսային եւ հարաւայինքն փակեալք յարտաքին շինութեանց նորայ եւ հնոյ , զորմէ ունիմք գրել 'ի ներքոյ ։

Ունի մի սեղան պատարագի եւ գերկուս խորանս 'ի հարաւոյ յառաջին եւ 'ի միջին դասու յայամիկ փոքրըկութեան խորուն ։ այլ բեմն զորմէ

աւերեալ յաւուրց ամայութեան Մե-
նաստանին, յաւուրս յայսմիկ Պօ-
ղոս վարդապետ Ջուլաթեան յե-
տին վանահայր նորա փոխադրեաց
անդր զփայտագործ խաչկալ Աստուա-
ծածին եկեղեցւոյն . 'ի ներքուստ է
ամբողջ, այլ արտաքուստ անկեալ է
գմբէթն 'ի վերուստ կիսով չափ .
յորոյ միոյ որպէս եզաք 'ի կարգի
պատմութեանս, ամբարձեալ է բո-
լորշի աշտարակ քարուկիր կոփա
շինուածովք 'ի Պահրիման սուլթա-
նէն յաղթանականն յերեսաց թըշ-
նամեաց ։

## Արձանագիրք սուրբ Գրիգո-րի Հնոյ եկեղեցւոյն Հաւուծոյ։

## Արձանագիր շինութեան սուրբ Գրիգորի, յարեւմ-տեան ճակատու նորին անթիւ ։

«Ես Սարգիս ձեռն շինեցի զեկե-
«ղեցիս, և 'ի քրտանց իմոյ եսու

«զոր ընծայ 'ի սուրբ ուխտս. և հայր
«Համազասպ սահմանեաց, որ 'ի
«Սարգսի և 'ի Նագոսի տաւնի
«Ն. առ պատարագեն զՔրիստոս
«յիմ անուն»։ (Այս բանք փորա-
գրեալ են հին գլխատառիւք, որ-
պէս այլ արձանագիրք. իսկ 'ի վեր-
ջոյ այսորիկ գրեալ մանր գլխագրով)
«ով խափանէ, դատի 'ի Տեառնէ։»

## Յորմն արևելեան 'ի հարաւակողմն՝ անթիւ։

«Ես Շատաղէկ միաբանեցայ
«սուրբ ուխտիս, եւ հայր Համա-
«զասպ եւ այլ եղբարք հաստատեցին
«որ 'ի մահու իմ զիմ միաբանու-
«թիւնն առնեն անպատճառ ով լինի»

## Արձանագիր նորոգութեան սուրբ Գրիգորի մերձ 'ի վերոյգրեալն՝ անթիւ։

«Ես Գրիգոր առաջնորդ սուրբ
«ուխտիս Համաձայն՝ շինեցի զտեղս

«ողջնոց կեան խմոյ 'ի հարկեւորաց
«կործանմանէն. եւ կարգեալ ստա
«ընծայեալս եւ խոստացեալս ուխտաւքն
«Աստուծոյ. եւ հաստատեալ կա-
«մակցութեամբ եղբարց. եթէ որ
«յաւաջնորդաց 'ի յընծայից եկե-
«ղեցւոյ խորէ, եւ զխոստակս բաղ-
«մաց եւ տուրս հոգոյ իւրն համա-
«րի, որչափ Աստուած աւրհնած է,
«այնչափ նզովեալ է. որ կաշառովք
«հայր, կենին նզովեալ է։»

'Ի ներքոյ սորա 'ի թիւ ՈԽԱ։

«Ամման Աստուծոյ մեր Ջաւի-
«ձնջիքս հայր Պետրոս եւ այլ եղ-
«բարքս ամենեքեան 'ի տանս Տա-
«պանակի իմ՝ 'ի մասունս պատա-
«րագել զ'Քրիստոս յանուն Պետ-
«րոսի փոխանակ արդեանց իւրոց.
«որք կատարեն, աւրհնեալ եղիցին.
«եւ որք ո՛չ, նզովս ժառանգեսցեն
«'ի 'Քրիստոսէ. 'ի թիւ ՈԽԱ։»

## Ի ներքոյ սորին ։

«Ի թվին ՌՄԿԷ. եւ յառաջնոր-
«դութեան Տեառն Պետրոսի, կամաւն
«Աստուծոյ եւ Աստուածատուր ե-
«սու զիմ հայրենի այգին որ յԱ-
«րուձի մերձ ի Թաղն Խաչկանց՝
«այգին եւ զինծամն եսու ի սուրբ
«ուխտս Հաւլձայի ի սուրբ Գրի-
«գորս եւ սուրբ Աստուածածինս.
«եւ առաջնորդք սուրբ ուխտիս
«խոստացան ինձ ի տարւոջն Ի.
«առ ժամ. զԱ. ալին իմ հարն
«Շէկին. եւ Ա. իմ մաւրն Մար-
«գինէ. եթէ ոք զլանայ, եւ չառ-
«նեն ի տաւնի սրբոյն Սարգսի,
«նզովեսցի յԱստուծոյ. եւ որք կա-
«տարեն, աւրհնեսցին յԱստուծոյ ։»

## Այց վերնոյն ։

«Ի ՌՄԿԷ. Թուականի. ես Գրի-
«գոր փորձատես որդի Տուտայ

«Եւ տու զսուրբ նշանս լուսոյ կրկին
«պահպանութեան երիս մասն զգրաւականս
«հոգւոյ խնկ 'ի սուրբ Աստուածա-
«ծնին Ֆաուինձայու․ պարտական են
«ինձ զմխիթարանութեան Գ․․ քառա-
«սունս եւ Զատկի ճրագալուցին
«Ա․ ժամարար, որչափ ուխտս 'ի
«հաստատութեան է․ եւ որ հանէ
«զնա 'ի սուրբ ուխտէս զինչ և լիցէ
«պատճառանաւք, նզովեալ է յԱս-
«տուծոյ եւ յամենայն սրբոց․ տուա
«'ի ձեռն հայր Պետրոսի, որք ըն-
«նակէք 'ի սուրբ տեղիս եւ կար-
«դայք զգիրս Պետրոսի, եւ հոգւոյ
«եւ մարմնոյ ծնողաց իւրոց եւ եղ-
«բարց թողութիւն 'ի մեղաց խնդրե-
«ցէք 'ի Քրիստոսէ աղաչեմք ։»

## Ժամատուն սուրբ Գրիգորի հնոյ եկեղեցւոյ,

Ժամատուն հնոյ եկեղեցւոյն լեալ է 'ի հարաւոյ այնորիկ կոփածոյ քարամբք, որ կողմն հարաւային հաստատեալ է 'ի վերայ քարաժայռին անընդմիջաւոր, այժմ խոնարհեալ մեծ մասամբք. զի հիւսիսային որմն նորա, որ կից է ժամատանն, է ծայրէ 'ի ծայր ամբողջ մինչև ցմիջին երկոսին կողմանական սիւնն հանդերձ հիւսիսակողման երկոքումբք կամարօք հաստատեալք 'ի վերնախարիսխս յիշելոյն սեանց և առաստաղօք. այլ վիճոյս այսորիկ սեանց ո՛չ թողլով մնալ 'ի ձեռս անգութ աւերանաց, քարաշարեալ երկարութեամբ յարևելից ցկողմն արևմտեան, արարեալ են այժմ սենեակ իմն, ուր պահպանին հարկաւոր իրք վանացն. Յորում երկոքին կողմնական կամարք 'ի հիւսիսային որմոյ անտի ցվերնախարիսխս սեանցն, որպէս առաջաւ,

կան հաստատուն, որպէս կոփածոյ քարամբք առաստաղ նորին :

Երկոքին այս սիւնք ո՛չ փոքր քան զնորոյ ժամանակն՝ են բոլորչի կարմիր միապաղաղ քարինք, փերմախարիսխս քառակուսիս և անկիւնաւորս ունելով · իսկ զխոյքնախարիսխն՝ բոլորչի իբրև գլխոյն :

Միւս երկու մարմարինքն միապաղաղք և անկիւնաւոր խարիսխքն անկեալ կան յաւերակս ժամանակին ընդխառնակեալ քարանց, յորոց ե՛ն, որք ջարդեալք են, և ե՛ն, որք ամբողջ են առ տեղեաւն :

Նշաստ, գուցէ և այլուր, ՚ի մենաստանս, յորս արարեալ են յետինք վերանորոգութիւն ՚ի շինուածս, զքարինս սրբազան տեղեաց գործածեալ են ՚ի նոսին · զի զքարինս աւերակաց սրբոց տանս, զխաչվէմս և զարձանագրեալ տապանս հնոց գերեզմանատան վանացս, զորս ստացեալ եմք ըստ կարգի, մնացորդս յիշատակ հնութեանց ՚ի վեցերորդ

դարու և այսր, անուսումնական ող-
ւոյ եղեալ է 'ի գործ շինութեանց
սենեկայ Գրիգոր վարդապետ Քամա-
կոչեան, զոր կառուցեալ է ար-
դեամբք ժողովրդականաց :

Եւ այս իսկ պակասութիւն մեծ
է ազգիս 'ի նախատինս մեզ 'ի յա-
ւիտենից և այսր, որովք անհե՛տ ե-
ղեն հռչակաւոր և սրբազան շինուածք
նախնեաց · և որ աւաղելին է, ար-
ձանագրութիւնք յիշատակաց մեծա-
գործութեանց ազգիս, որք զարդէին
եթէ էին, կարէին և անշուշտ պար-
գևել մեզ զբազում մթութիւնս նախ-
նեաց հնութեանց, զժամանակ շի-
նութեանց Աստուածայնոց տաճա-
րաց և զազգային անցից 'ի նիւթ
պատմութեանց :

Զսուրբ Գրիգորն գուցէ և ըզ
ժամանակս զայս նորոգեաց 'ի հա-
րիւրամեայ կործանմանէն՝ երջանիկ
ծերունին Գրիգոր յաղագս սնանե-
լոյ իւրոյ յայս մենաստան, որպէս
գրեցաք 'ի վերն ·

Յարեւմտից կլիմայայորդ ժամա-տանն մինչեւ ցծայրս քարամայրին կէց արկեալ 'ի պէտս միաբանելոյն զանձնակս 'ի մէջ սրահին ընդ հարաւ , զարեւմտեան ձիւնկատ յիշեալ հէն եկեղեցւոյն եւ ժամատանն առեալ են ընդ մէջ · յորում որպէս տաճար , փակեալ է արեւմտեան դուռն տաճարին ընդ նորոգ որմնաշարովն , եւ անհմուտ խորհրդով կորուսեալ ըզ վայելչութիւն նորա :

Հին պարիսպ եկեղեցւոյս կամ ամրոց յիշատակեալ 'ի Զաքարեայ յարձանագրին , անկեալ է առ մեօք , քակեալ յարձակմանն անդ Բեանլա-լոյ խանին Պարսից , զորմէ գրեցաք յառաջն , միայն մասն ինչ մնացեալ յարեւելից հիւսիսոյ , յորոյ վերայ կառուցեալ են նորկոյ արհեստաւոր ժողովուրդք Ալէքսանդրապոլու ըզ քառակիր շինուածս պարսպին նորոյ , կամարակապ դրունս թողեալ յարեւելից եւ 'ի հիւսիսոյ , զի եւ պարիսպն չէ խիկ շրջապատ , այլ յայս երկուսին

կողմանս . իսկ 'ի միւս երկոսեանսն՝ կողմնականս ձորքն , վերոյ 'ի նմբքոյ ։

Ա՛յլայն յաւերանս անդ պարապաքարանցն եղելոց ուրեք ուրեք 'ի սրահին , դուռ կիսաբոլորակ մեծ Ձեւաւոր գրան սպարայկն հնոյ հանդերձ արձանագրութեամբ 'ի ժամանակէն, զոր վասն խալառ եղծմանն չե՛ղեւ հնար ընթեռնուլ ։

Նշմարեան և հարաւայնի կողմանք մենաստանին գոլով 'ի վերոյ քարամայրին, ընդ կամուրջս երկուց կողմնական ձորոյն, չունին վտանգ . այլ կանգնեալ են 'ի ձորաբաշս յասակի՝ քարաշէն սենեակք նոյնպէս արդեամբք արհեստաւորաց քաղաքին 'ի դէտս ուխտաւորաց, որք յաճախեն անդր վասն ուխտին յորդ հանուր Ներակոյ 'ի Յուստասանեայց մասին . և այսպէս շրջապատ բակ ուտեալ մինչև ցկողմն հիւսիսոյ , յումէ և անդր՝ պարխայն նորակառոյց ։

Նայս ամենայն շինութիւնք 'ի մենաստանին եղեն 'ի 1830 ամէ . որ-

պէս եղաք և 'ի կարգի պատմու-
թեանս. զի 'ի նմին ժամանակի դաշ-
թականօք շինեալ Շիրակ, Սամ-
փսոնոս եպիսկոպոս Խաժակնեան
կարնեցի առաջնորդ Կարուց բար-
ձեալ զկիսաբանութիւն Հռոմէական
փառաց որ յայնկոյս Ախուրեան գե-
տոյ, բերէ ամենայն աղխիւքն 'ի
փառս Հռոմայ, մինչ յաւերանաց
զեկեղեցին, և կանգնէ զսեղան պա-
տարագի յեկեղեցւոջ կաթուղիկէ
Աստուածածնի. և զխաչկալ դրօ-
գաւոր փայտակերտ՝ արդեամբք Սա-
տանեանց բարեպաշտ Սարդիշաղ
ափինոջ, և ձեռնտուութեամբ դաշ-
թական ժողովրդոյ՝ շինէ 'ի նորս
պարսպին 'ի հիւսիսոյ մերձ 'ի դուռն
մեծ՝ զերկուս ախոռս անասնոց, ընդ
ոչխարատունն և զինչ սենեակս
'ի վեր քան զնորոգ շինեալն.

Իսկ 'ի 1839 ամէ և այսր շինե-
ցան պարիսպն և արեւմտակողմն և
հարաւային սենեակքն, որք յիշե-
ցան 'ի փառահայրութեան Պօղոս

և Գրիգոր վարդապետացն որդեակք արհեստասիրաց քաղաքին, և շինեն հետ զհետէ ևս այսպիսի բարեպաշտական հոգևոր յիշատակաց շինութիւնք 'ի նուիրման ջերմեռանդ ժողովրդոց վիճակին Շիրակայ, է, որ յորդորանօք, և է, որ առատապարգև տրօք ըստ ջերմեռանդութեանց սրտից՝ պարոնացն Աղաբէկի Տիգրանեանց, Յովսեփայ տէր Պետրոսեան, Սահակայ Ամիրջանեան, Պռութի տէր Ամիրջանեանց, Յարութիւնի Յարութիւնեան և բժիշկ Գրիգորի Յակովբեան, այլև բնակչաց Ալէքսանդրապօլու. որոց զօրացեալ միով հոգւով, բարեպաշտութեամբ և սիրով 'ի պայծառութիւն տանն Աստուծոյ և Աստուածայնոց տաճարաց, յինքեանց և յայլոց բարեպաշտից յոյն զդակասութիւն հարկաւորացն շինութեանց հռչակաւոր Մենաստանին Հառիճոյ, ակնկալութեամբ անդրագոյն վարձուցն Աստուծոյ հատուցմանց:

1971 Թ.

Презирающій уд

же нищаго уважа

дает. милующій же ни

ующій нищаго въ заим

даетъ каждому по его

наго сострадаетъ ми

хорошо

едаетъ Богу Милующі

[45]

угождаетъ Богу Ми...

Богу, который вз...

...ія, Презирающій у...

Довольн...

...щій злое нищаго у...